

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Ազգի Հպարտութեան Միակ Առարկան

Անցեալ շաբաթավերջին Երեւանի մէջ կայացած ՀԱԿ կուսակցութեան համագումարի ընթացքին, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան իր ունեցած ելոյթի մեծ մասը յատկացուցած էր Լեւոնային Ղարաբաղի հարցի լուծման, պաշտպանելով այն տեսակետը, թէ պետք է վերադարձնել Արցախի շուրջ տարածքները՝ Ղարաբաղի միջանկեալ կարգավիճակի եւ խաղաղութեան դիմաց:

Նախկին նախագահի այս կարծիքը նորութիւն չէր: Այս նոյն քաղաքականութիւնը անցեալին պատճառ դարձած էր, որ ան ստիպուի հրաժարական ներկայացնել նախագահի պաշտօնէն: Ինչպէս այդ ժամանակ, ներկայիս եւս, անոր արտայայտած այս տեսակետները դարձան լայն քննարկման եւ քննադատութեան առարկայ՝ շատերու կողմէ նկատուելով վտանգաւոր եւ պարտուողական:

Աւելի լաւ ընդունուեցաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի իր ելոյթի աւարտին կատարած մէկ խորհրդածութիւնը. «Ելոյթս գուցէ դառն ստացուեց, բայց իմ նպատակը ոչ թէ մարդկանց վիատեցնելն էր, այլ, ընդհակառակը, ազգին ներկայիս հեղձուկ իրավիճակից յուսադրիչ ու արժանապատիւ ելք ցոյց տալը՝ ազգ, որի ուրախութեան ու հպարտութեան միակ առարկան այսօր Հենրիխ Մխիթարեանն է»:

Մարզական աշխարհէն հեռու եղողներուն համար յայտնենք, որ Հենրիխ Մխիթարեանը ֆութպոլային աշխարհի այն աստղն է, որ հանդէս գալով Եւրոպական խաղադաշտերու վրայ կը հմայէ միլիոնաւոր ֆութպոլասէրներու:

Այսօր շատեր համաձայն են այն կարծիքին հետ, որ հպարտութեան առիթները սկսած են պակսիլ հայութեան համար: Անկախութեան առաջին տարիներու խանդավառութիւնը, օրէ-օր ետքայլ արձանագրելով, ոմանց մօտ հասած է Հայաստանի ապագայի նկատմամբ խիստ մտահոգութեան, իսկ, այլոց մօտ՝ անտարբերութեան:

Մեր ժողովուրդը, Հայաստանէն մինչեւ սփիւռք, կարիքն ունի բազմաթիւ հերոսներու, ոչ միայն Ողիմպիական հարթակներու, ճատրակի սեղաններու եւ կամ ֆութպոլի կամայ դաշտերու վրայ, այլ նաեւ պատերազմի ճակատներուն վրայ, քաղաքական ասպարէզներու մէջ, գիտութեան, մշակոյթի, գրականութեան, արուեստի ու այլ բնագաւառներու մէջ: Իսկ, այս բոլորը ունենալու համար պետք է նախ ունենալ կայուն, զարգացած ու ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդուող երկիր:

«ՄԱՍԻՍ»

Ատրպէյճանի «Խաւիարային Քաղաքականութեան» Վերաբերեալ Նոր Զեկոյց Պատրաստուած է

«Եւրոպական կայունութեան նախաձեռնութիւնը», որուն գրասենեակը կը գտնուի Գերմանիոյ մայրաքաղաք Պերլինի մէջ, հրապարակած է իր հետաքննութեան երկրորդ մասը՝ Ատրպէյճանի «խաւիարային քաղաքականութեան» վերաբերեալ:

Զեկոյցը բացայայտած է Ատրպէյճանի իշխանութիւններու կաշառակերութեան ծրագրերը, որոնց մէջ ներգրաւուած են Եւրոպական բարձրաստիճան տասնեակ պաշտօնեաներ, որոնց կարգին, Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ներկայ նախագահ՝ Փետրօ Ակրամունթը:

Պաշտօնական Պաքուի շահերը լուրջօրէն ընդդէմ դիմադրողներին կը համարուի ԵՆԽՎ-ի ժողովրդական կուսակցութեան խումբի նախկին նախագահ, իտալացի պատգամաւոր Լուքա Վոլոնտէ: Իտալիոյ դատախազութիւնը 2015-ին սկսած է ուսումնասիրել Լուքա Վոլոնտէի հետ կապուած դրուագներ: Ան հաստատած է, որ Ատրպէյճանէն ստացած է 2 միլիոն 390 հազար

Եւրօ: Գումարները օգտագործուած են պատգամաւորները կաշառելու համար, որպէսզի անոնք ԵՆԽՎ-էն ներս դէմ քուէարկեն Ատրպէյճանի վերաբերեալ բանաձեւերուն կամ Ատրպէյճանի մէջ մարդու իրաւունքներու հետ կապուած իրավիճակը դատապարտող գեկոյցներուն: Մասնաւորապէս, նշուած է ԵՆԽՎ-ի 2013-ին Ատրպէյճանի մէջ քաղաքական բանտարկեալներու վերաբերեալ գեկոյցի տապալումը:

«Եւրոպական կայունութեան նախաձեռնութեան» Դեկտեմբեր 17-ին հրապարակած գեկոյցին մէջ նշուած է, որ Միլանի դատախազութիւնը հիմա կ'ուսումնասիրէ, թէ արդեօ՞ք Լուքա Վոլոնտէն կրնայ քրէական պատասխանատուութեան ենթարկուիլ կաշառակերութեան կամ փողերու լուսցման մեղադրանքներով:

Քսան էջանոց գեկոյցին մէջ նշուած են նաեւ ԵՆԽՎ-ի ատրպէյճանական պատուիրակութեան անդամներ՝ էլիսան Սուլէյմանովի եւ Մուսլիմ Մամատովի անունները,

Շար.ը էջ 5

Երկու Հայ Նախարարներ Լիբանանի Նոր Կառավարութեան Կազմին Մէջ



Լիբանանի կառավարութեան կազմի Օղասապեան եւ Աւետիս Կիտանեան

հայ նախարարներ՝ Ժան (ձախին)

Երկար բանակցութիւններէն յետոյ վերջապէս կազմուած է Լիբանանի նոր կառավարութիւնը: Նոր կառավարութեան կազմին մէջ ընդգրկուած են երկու հայ նախարարներ՝ Ժան Օղասապեան (կանանց հարցերու պետական նախարար) եւ Աւետիս Կիտանեան (զբօսաշրջութեան նախարար):

Նախապէս կը խօսուէր 24 անդամներէ բաղկացած կառավարութեան մը մասին, սակայն վերջաւորութեան անոր թիւը երեսունի բարձրացաւ, քաղաքական բոլոր կողմերուն գոհացում տալու Նատակով:

Վարչապետ Սատտ Հարիրի եւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի՝ Կիրակի երեկոյեան, այցելեցին նախագահական պալատ: Անոնք խորհրդակցութիւն մը ունեցան հանրապետութեան նախագահ Միշէլ Աունի հետ, անոր փոխանցելով երեսուն անդամներէ բաղկացած կառավարութեան անուանացանկը: Կառավարութեան կազմը յայտարարուելէ քանի մը ժամ առաջ, Փաղանգաւոր Կուսակցութեան պետ Սամի ձեմայէլ յայտարարեց, թէ իր գլխաւորած կուսակցութիւնը մերժած է մաս կազմել նոր կառավարութեան»:

Գերմանական Դատարանը Մերժած է Ցեղասպանութեան Ճանաչման Դէմ Բողոքները

Գերմանիոյ բարձրագոյն դատարանը մերժած է շաբթ մը բողոքներ, որոնք ներկայացուած էին Պունտեսթակի կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու որոշման դէմ:

Դաշնային Սահմանադրական Դատարանը ութ բողոք մերժած է, որոնք ներկայացուած էին, անցեալ Յունիսին օրէնսդիրներու կողմէ հաստատուած Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի դէմ, այս մասին կը հաղորդէ «Աշխէյ-թըտ Փրես» գործակալութիւնը:

Երկուշաբթի օր, Գերմանիոյ Դաշնային Սահմանադրական Դատարանի հրապարակած վճիռներէն մէկուն մէջ նշուած է, որ հայցուողը բաւարար ապացոյցներ չէ ներկայացուցած, թէ իր հիմնարար ազատութիւնները խախտուած են եւ նման խախտումներ ակնյայտ չեն:

Ամերիկեան մամուլը գործակալութիւնը լիջեցուցած է, որ Պունտեսթակի մէջ ընդունուած բանաձեւը զայրացուցած էր Անգարային: Թուրքիա, Գերմանիայէն ետ կանչած էր իր դեսպանին: Անգարա նաեւ կ'արգիլէր գերմանացի պատգամաւորներու այցելութիւնը Ինձիրիք ռազմական տեսակցելու այնտեղ ծառայող գերմանացի զինծառայողներուն հետ:

Թուրք-գերմանական յարաբերութիւնները սկսան վերստին կարգաւորուիլ, երբ Գերմանիոյ կառավարութիւնը յայտարարեց, որ Պունտեսթակի ընդունած բանաձեւը իրաւական պարտադիր ուժ չունի:

«Կրին Քարտի» Խաղարկութեամբ Հայաստանցիներուն Տրամադրուած Ամերիկեան Վիզներու Թիւը Նուազած է

Միացեալ Նահանգներու ներգաղթային անցագրերու խաղարկային ծրագրին՝ «Կրին քարտի» խաղարկութեան մասնակցող Հայաստանի քաղաքացիներու թիւը ամէն տարի կ'աճի, սակայն վերջին երկու տարիներուն տրամադրուած անցագրերու թիւը նուազած է:

Երեւանի ԱՄՆ դեսպանատունը տեղեկացուցած է, որ 2016-ին «Կրին քարտի» խաղարկութեան վերաբերեալ Հայաստանի քաղաքացիներուն տրամադրուած է 1544 անցագիր, մինչ խաղարկութեան մասնակցած է 131,088 քաղաքացի: Ըստ որուն, թէեւ Հայաստանէն ներգաղթային անցագրերու խաղարկային ծրագրի յայտատուներու թիւը ամէն տարի կ'աճի եւ

Շար.ը էջ 5

Ալիեւը Համաձայնուե՞լ է ճանաչել Ղարաբաղի Անկախութիւնը

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՍԵԱՆ

Ղարաբաղեան խնդրում ինչ որ գործընթաց է սկսել: Մոսկուան նորից փորձում է առաջ քաշել «Կազանի պլանը»: Դրա համար Հայաստանում ու Ատրպէյճանում գուզահեռ գործընթացներ են սկսուել:

Կազանեան պլանը նախատեսում է Ղարաբաղի համար միջանկեալ կարգավիճակ դարաբաղեան որոշ շրջանների դիմաց, որտեղից պէտք է դուրս բերուեն հայկական զորքերը: Մոսկուան պատրաստուում է այդ շրջաններն Ատրպէյճանի տալ, թէ իր զորքերը տեղակայել եւ, ինչպէս որոշ փորձագէտներ են նշում, այդ տարածքները կ'անցնեն Կրեմլի «ուղիղ կառավարմանը»:

Ատրպէյճանից պահանջուում է ընդամենը մի քանի խաղաղասիրական յայտարարութիւն անել եւ մշուշոտ խոստում տալ, որ Ղարաբաղի բնակչութեանը թոյլ կը տրուի հանրաքուէ անցկացնել: Ալիեւը, ըստ երեւոյթի, արդէն սկսել է խնդրի իրականացումը: «Հայաստրպէյճանական» պատճառով ստեղծուում եւ միւս քայլերը պէտք է դառնան Ալիեւի «խաղաղասիրութեան» ապացոյցը:

Հայաստանից պահանջուում է զորքերը դուրս բերել մի շարք շրջաններից: Այդ հարցը Հայաստանում, առաւել եւս Ղարաբաղում, գործնականում չի քննարկուում: Չնայած պաշտօնական իշխանութիւնները բանակցում են դրա շուրջ, չնայած զորքերը դուրս

Եւ ահա, գործընթացի մէջ մտաւ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, որը փորձում է քաղաքական դիսկուրս ձեւաւորել, որի էութիւնը պարզունակ բանաձեւն է՝ մենք լսում ենք Փութինի հայրական խորհուրդներին ու տարածքներ յանձնում: Ալիեւը, նոյնպէս Փութինի խորհուրդով, մեծահոգաբար համաձայնուում է Ղարաբաղին միջանկեալ կարգավիճակ տրամադրել, էրտողանը Փութինի հետ միասին բացում է հայ-թուրքական սահմանը, բոլորն սկսում են լաւ ապրել, եւ ոչ ոքի այլեւս չեն զօրակոչի Ղարաբաղեան բանակ:

Հայաստանում ու Ատրպէյճանում երկու գուզահեռ գործընթաց է տեղի ունենում, ընդ որում՝ Հայաստանի իշխանութիւնները համաձայնութիւն են յայտնել, բայց Ալիեւը ոչ մի կերպ չի արտաբերել «կախարդական բառերը»: Այս մասին վկայում է ՀՀԿ խօսնակ Էդուարդ Շարմազանովի յայտարարութիւնը, որը մեկնաբանել է Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը եւ ասել, որ Հայաստանի իշխանութիւնները նոյնպէս համարում են, որ փոխգիշում է անհրաժեշտ (այլ կերպ ասած՝ գիշումներ), սակայն Ատրպէյճանը չի ցանկանում անցնել ճանապարհի իր հատուածը: Փաստացի, եթէ Ալիեւը խոստանայ, որ օրինակ կը ճանաչի հանրաքուէի արդիւնքները, որը կայանալու է 50 տարի անց, ապա Ռուսաստանը դա անմիջապէս կ'ընկալի որպէս ազդանշան Հայաստանի վրայ ճնշման համար, որին արդէն դժուար կը

Ղարաբաղեան խնդրում ինչ որ գործընթաց է սկսել: Մոսկուան նորից փորձում է առաջ քաշել «Կազանի պլանը»: Դրա համար Հայաստանում ու Ատրպէյճանում գուզահեռ գործընթացներ են սկսուել

բերելու պատրաստակամութեան վերաբերեալ Սերժ Սարգսեանի բազմիցս արած խոստովանութիւններին, բնակչութիւնը մեծամասամբ չի ընդունում այդ տարբերակը որպէս ռացիոնալ լուծում: Աւելին, երբ Ապրիլին Ատրպէյճանը փորձում էր ուժով տարածքներ վերցնել, հանրութիւնն աննախադէպ համախմբեց եւ պաշտպանեց իր հողերը:

Յուլիսին հանրութեան ռազմիկալ հատուածը ներկայացնող «Մասնա ծուր» խումբը գիտնաձայնաբարութեան դիմեց եւ շատ յստակ յայտարարեց, որ Հայաստանում կան ուժեր, որոնք իշխանութիւններին թոյլ չեն տալիս գիշումների գնալ:

Անկասկած, հանրութիւնում կան խմբեր, որոնք հոգու խորքում աջակցում են գիշումներին. շատերն այն բանի համար, որ իրենց երեխաները չծառայեն կոռուր բանակում, միւսներն էլ այն պատճառով, որ երբեք չեն նայել քարտէզին ու չեն պատկերացնում, թէ ինչի մասին է խօսքը: Այդ մարդիկ, սակայն, դիսկուրս չեն ձեւաւորում եւ չեն համարձակուում բացայայտ յայտարարել իրենց դիրքորոշման մասին:

Ինչի չանել իր քայլը: Լեւոն Տէր-Պետրոսեանն իզուր չի ընդգծել, որ դա Ռուսաստանի, այլ ոչ թէ Միւսկի խմբի առաջարկն է: Ըստ ամենայնի, նա գիտի եւ ակնարկում է, որ ուժի միւս կեղծոնները դէմ են այդ պլանին: Մինչ այժմ այն չի իրագործուել, հնարաւոր է ոչ թէ Ալիեւի եւ Սարգսեանի անգիշում լինելու, այլ նոր աշխարհակարգի կառուցման գլոբալ ծրագրերին չհամապատասխանելու պատճառով: Առաւել եւս, այդ պլանն բացուողային է դառնում, երբ թուրքիւն դարձել է ապակայունացման ու ահաբեկչութեան հպիկենտրոն, Սիրիան ու Իրաքը փլուզման եզրին են, իսկ ԱՄՆ-ն դեռ չի սահմանել իր արտաքին քաղաքականութիւնը:

Ինչո՞ւ է Լեւոն Տէր-Պետրոսեանը կոչ անում շտապել եւ ընդունել ռուսական ծրագիրը: Ինչո՞ւ է ասում, որ շուտով կարող է ուշ լինել: Միգուցէ նա ինչ-որ բան գիտի Ռուսաստանի ապագայի եւ ԱՄՆ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ: Եւ, կոչ անելով շտապել, իրականում խորհուրդ է տալիս սպասե՞լ:

«ԼՐԱԳԻՐ»

Ուժն է Հայաստանի Կեսը

ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՆԻ

Հայաստանի արտաքին պարտքերը 2017 թուականին կը մօտենայ 6 միլիարդ տոլարի շէմին, իսկ Հայաստանը շարունակում է նորանոր պարտքեր կուտակել: Սա էլ իր հերթին նշանակում է, որ Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչների անձնական հարստութիւնն առաջիկայում աւելանալու է, որովհետեւ պետական արտաքին պարտքը Հայաստանում կատարում է շատ պարզ գործառոյթ՝ այդ պարտքն ըստ էութեան լրացնում է այն, ինչը իշխանութիւնը տանում է իր անձնական գրպանը պետական կամ հանրային միջոցներից: Եւ եթէ պարտքը աւելանալու է, կը նշանակի՝ աւելանալու է նաեւ այդ միջոցներից անձնական գրպան գնացող գումարների ծաւալը: Այսինքն՝ շատ պարզ ու յստակ բանաձեւ է:

Իսկ դրա դիմաց արդէն իր անձնական միջոցներից վճարելու է Հայաստանի Հանրապետութեան շարքային քաղաքացին, քանի որ արտաքին պարտքը մարելու են քաղաքացիները իրենց միջոցների վճարումներից կազմուած պիւտճէից՝ յետագայ տարիների ընթացքում: Այսինքն՝ որքան աւելանայ

իշխանութեան ցերկայացուցիչների անձնական հարստութիւնն առաջիկայում աւելանալու է, որովհետեւ պետական արտաքին պարտքը Հայաստանում կատարում է շատ պարզ գործառոյթ՝ այդ պարտքն ըստ էութեան լրացնում է այն, ինչը իշխանութիւնը տանում է իր անձնական գրպանը

արտաքին պարտքը ՀՆԱ-ի համեմատ, այդքան պարզ է, որ պետութիւնը սկսում է վերցրած վարկի համեմատ աւելի քիչ բարիք ստեղծել: Իսկ եթէ պետութիւնը աւելի քիչ է բարիք ստեղծում, ապա կ'մ յայտարարուում է անվճարունակ, այսինքն՝ դեֆոլտ է յայտարարուում, կ'մ էլ պարտքը մարելու համար աւելի ու աւելի մեծանում է քաղաքացիների վրայ դրուող հարկերի ու տուրքերի բեռը:

Նաեւ այդ նկատառումից ելնելով է, որ կառավարութիւնը անցեալ տարի մօտաւորապէս այս նոյն ժամանակահատուածում բացասաբար գնահատեց ու մերժեց պատգամաւոր էլզմոն Մարուքեանի օրէնսդրական նախաձեռնութիւնը արտադատական կարգով քաղաքացիներից տուգանքները գանձելն արգելելու վերաբերեալ:

Կառավարութեան համար շատ կարեւոր է, որ քաղաքացիների գրպանից փողերը հնարաւորինս արագ, անարգել, առանց աւելորդ քաշքուղի, աւելորդ ժամանակ ու ռեսուրսներ խլելու յայտնուեն պետական գանձարանում:

Քանի դեռ Հայաստանում մեծանում է արտաքին պարտք-ՀՆԱ շարաբերակցութիւնը, կառավարութիւնն աւելի ու աւելի պէտք է մեծացնի քաղաքացիներից տարատեսակ պատճառներով ու առիթներով գանձող գումարների ե՛ւ ծաւալը, ե՛ւ, այսպէս ասած, դրանց հոսքն ապահովող խողովակի լայնութիւնը:

Ահա այն իրողութիւնը, որ

կայ ՀՆԱ-արտաքին պարտք յարաբերակցութեան թուերի հետեւում, որոնք գուցէ առերեւոյթ Հայաստանի շարքային քաղաքացիներին ըստ էութեան ոչինչ չեն ասում, թուում են հեռաւոր մակրոտնտեսական ցուցանիշ, որը կապ չունի «հացի խնդրի» հետ: Մինչդեռ ունի, այն էլ՝ ուղիղ կապ, եւ այդ խնդրի լուծումը բարդանալու է ուղիղ համեմատականով այն ցուցանիշների հանդէպ, որոնցով ներկայումս չափուում է ՀՆԱ-արտաքին պարտք շարաբերակցութիւնը:

Իրավիճակը յար եւ նման է այն դէպքին, երբ ընտանիքի հայրն իր եկամտի 50 տոկոսը ծախսում է գուտ անձնական կարիքներին համար՝ այն դէպքում, երբ ընտանիքն ապրում է պարտքով: Ու որքան հայրը մեծացնում է իր անձնական գուարճանքի ծախսերը, այդքան մեծացնում է արտաքին պարտքը՝ արդէն ամբողջ ընտանիքին պատկանող գոյքի, այսպէս ասած, գրաւադրմամբ: Արդիւնքում հայրն ի վերջոյ ընտանիքի հաշուին իր կուտակած անձնական միջոցներից կապահովի իր անհոգ ապագան՝ այն դէպքում, երբ ընտանիքը ստիպուած կը լինի յայտնուել փողոցում:

Ահա այն, ինչ ըստ էութեան տեղի է ունենում այսօր Հայաստանում: Եթէ ՀՆԱ արտաքին պարտքը 2017 թուականին մօտենալու է վեց միլիարդ տոլարին, դա, կոպիտ հաշուով, նշանակում է, որ Հայաստանի ՀՆԱ կէսն արդէն Հայաստանի նաեւ, որ այդ իրավիճակը Հայաստանի առնուազն կէսը մտնելու հետեւանք է, ապա շատ շուտով կը գնայ նաեւ Հայաստանի ՀՆԱ կէսի կէսը՝ Հայաստանին թողնելով ՀՆԱ-ի մէկ քառորդը, առայժմ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷԱՉԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լեւոն Տէր-Պետրոսեան Վերընտրուեցաւ ԶԱԿ Կուսակցութեան Նախագահ



Լեւոն Տէր-Պետրոսեան ԶԱԿ-ի հասգումարն առջեւ

Շաբաթ, Դեկտեմբեր 17-ին, Կառավարութեան նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ «Հայ Ազգային Կոնգրես» (ՀԱԿ) կուսակցութեան 2-րդ, բաց հիմնական հաշուարկով 20-րդ համագումարը, նկատի առնելով որ ՀԱԿ-ը ՀՀԾ-ի ժառանգորդը կը համարուի:

Համագումարի ընթացին կուսակցութեան նախագահ վերընտրուեցաւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան:

Գոնկրէսը իր նախագահը եւ վարչութեան անդամները ընտրեց գաղտնի քուէարկութեամբ: Կուսակցութեան վարչութեան անդամ ընտրուեցաւ նաեւ հետախուզման մէջ գտնուող, ներքին գործերու նախկին նախարար Վանօ Սիրատեղեան:

Նշենք, որ համագումարին այլ քաղաքական ուժերէն ներկայ էր միայն ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը:

ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան իր ելոյթին մէջ անդրադառնալով Ապրիլեան պատերազմին ըսաւ, թէ կը կարծէ, որ ան Ատրպէյճանի ղեկավարութեան ապացուցած պէտք է ըլլայ, վտանգի պահուն հայ ժողովուրդի միաւորուելու ու ցանկացած ոտնձգութեան հուժկու հակահարուած հասցնելու կարողութիւնը:

ՀՀ առաջին նախագահը նշեց, որ հակառակ իր ռազմաշունչ հռետորաբանութեան, Իլհամ Ալիեւը կը համարէ իրաւացի մտածող պետական գործիչ, որ ընդունակ է համաչափ քայլ կատարել խաղաղութեան հաստատման նաեւ սեփական ժողովուրդին խիստ անհրաժեշտ ուղղութեամբ:

Ըստ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Հայաստանի մէջ ճշմարտութեան երեսին ուղիղ նայող ուրիշ ուժ չկայ: «Ես Կոնգրեսին առաջարկում եմ խիզախաբար ընտրութիւններ զնալ «Խաղաղութիւն, Հաշտութիւն, Բարիդրացիութիւն» նշանաբանով: Դա չի կարող հասկացողութիւն չգտնել ժողովրդի ճնշող մեծամասնութեան մօտ, որովհետեւ Հայաստանի ու Ղարաբաղի փրկութեան, ապահովութեան ու զարգացման այլ ճանապարհ գոյութիւն չունի», - ըսաւ ան:

Լեւոն Տէր-Պետրոսեան նշեց, թէ իր կարծիքով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն ՀԱԿ-ը պէտք է մասնակցի այս նշանաբանի կամ քաղաքական

հարթակի շուրջ ձեւաւորուած դաշինքով եւ այդպիսի դաշինք կազմելու ցանկութիւն յայտնող կուսակցութիւններու առջեւ դռները պէտք է բաց ըլլան:

Այսպիսով, Ղարաբաղեան կարգաւորման հարցով Կոնգրեսի դիրքորոշումը աւելի յստակեցնելով Լեւոն Տէր-Պետրոսեան ըսաւ.

ա. Առանց այդ խնդրի լուծման Հայաստանը եւ Ղարաբաղը զրկուած են ապահովութեան, զարգացման ու բարգաւաճման որեւէ հեռանկարից. տասնութ տարին քիչ ժամանակ չէր, այդ բանն ըմբռնելու համար:

բ. Այլ լուծում, քան այն, ինչ դրուած է բանակցութիւնների սեղանին, գոյութիւն չունի: Պահը բաց թողնելու դէպքում յաջորդ լուծումը մեզ համար աւելի վատն է լինելու:

գ. Կարգաւորման արդիւնքում կողմերն իրենց յաղթող կամ պարտուող չպէտք է զգան, այլ պէտք է երկարաժամկէտ կտրուածքով նրանց յարաբերութիւնները յղի կը լինեն հակամարտութեան վերականգնման մշտական վտանգով:

դ. Հայ Ազգային Կոնգրեսը, ինչպէս արդէն նշուեց, կարծիք արտայայտելուց բացի, կարգաւորման գործընթացի վրայ ազդեցութեան այլ լծակ չունի:

ե. Հարցի լուծման պատասխանատուութիւնն ամբողջապէս ընկած է իշխող վարչախմբի եւ նրա լեհարանը հանդիսացող քաղաքական ուժերի վրայ:

զ. Եթէ մեր իշխանութիւնն ի գօրու լինի հասնելու աւելի շահեկան, յաղթողական լուծման, մենք միայն կ'ողջունենք դա եւ ներողութիւն կը խնդրենք նրանցից:

է. Մենք հաւասարապէս ցաւում ենք հակամարտութեան պատճառով ոչ միայն հայերի, այլեւ ատրպէյճանցիների կրած անհամար տառապանքների համար եւ անկեղծօրէն հաւատում երկու ժողովուրդների խաղաղ համակեցութեանն ու բարիդրացիական յարաբերութիւնների հաստատմանը:

«Ելոյթս գուցէ դառն ստացուեց, բայց իմ նպատակը ոչ թէ մարդկանց վհատեցնելն էր, այլ, ընդհակառակը, ազգին ներկայիս հեղձուկ իրավիճակից յուսադրիչ ու արժանապատիւ ելք ցոյց տալը՝ ազգ, որի ուրախութեան ու հպարտութեան միակ առարկան այսօր Հենրիխ Միխիթարեանն է», - իր խօսքը եզրափակելով ըսաւ Լեւոն Տէր-Պետրոսեան:

Սէյրան Օհանեան Յայտարարեց Քաղաքականութիւն Վերադառնալու մասին

Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան կը վերադառնայ աշխուժ քաղաքականութիւն եւ կը պատրաստուի մասնակցել յառաջիկայ ընտրութիւններուն:

Դիմատետրի (Facebook) էջին վրայ տարածած յայտարարութեան մէջ, Օհանեան չէ յստակացուցած, թէ որ կուսակցութեան հետ մտադիր է առաջադրել իր թեկնածութիւնը: Նախկին նախարարը միայն նշած է, որ այս պահուն աշխուժ բանակցութիւններու մէջ է քաղաքացիա-քաղաքական ուժերու հետ:

«Քաղաքական կառավարման կայացած համակարգերում կարելու է տարբեր դիրքորոշումներն ու բազմակարծութիւնը, որոնք յետագայում հիմք են դառնում նոր վերադասաւորումների եւ վերախմբաւորումների. «Եթէ չկայ երկրորդ կարծիք, ապա ինչից ընտրել լաւագոյնը»: Ես կտրականապէս մերժում եմ, երբ քաղաքական գործիչների կարծիքների եւ տեսակէտների բախումը վերածուում է ծայրայեղ հակամարտութեան, փոխադարձ թշնամանքի եւ ատելութեան: Դէմ եմ, երբ այլակարծութիւնը դառնում է քաղաքական յետապնդումների, զրպարտութեան, հայտարարած է Սէյրան Օհանեան՝ աւելցնելով, որ յառաջիկային կը ներկայացնէ իր քաղաքական գործունէութեան ծրագրերն ու դրոյթները:

Իշխող հանրապետականներու համար Սէյրան Օհանեանի վերադարձը անակնկալ չէ, կուսակցութեան գործադիր մարմնի անդամ Արմէն Աշոտեան պնդած է, թէ հեռացած պաշտօնեաները վերա-



Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան

դառնալով մեծ նուաճումներ չեն ունենար:

Սէյրան Օհանեանի հետ համագործակցելու պատրաստակամութիւն յայտնած է Աժ նախագահի նախկին ներկայացուցիչ Վիքթոր Տալլաքեան: «Մենք նոյն ձեւով ենք գնահատում նաեւ Հայաստանի Հանրապետութիւնում ստեղծուած իրավիճակից դուրս գալու ելքերը», - յայտարարած էր ան:

Յիշեցնենք, Պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեան պաշտօնաթող եղած էր այս տարուան Հոկտեմբերին: Իր այսօրուան յայտարարութեան մէջ ան նշած է, որ պաշտօնին հրաժեշտ տուած է հանգիստ եւ առանց զգայական գեղումներու, յետագային մերժած է իրեն առաջարկուած բոլոր բարձր պաշտօնները:

Փորձագէտները Համաձայն Չեն Տէր-Պետրոսեանի Գնահատականին Հետ

Ապրիլեան պատերազմէն յետոյ Սերժ Սարգսեանի հետ հանդիպած Տէր-Պետրոսեան ՀԱԿ համագումարին յայտարարեց՝ զարաբաղեան կարգաւորման բանակցութիւններու սեղանին դրուած է փուլային տարբերակը, որուն, ըստ առաջին նախագահի, այլընտրանք գոյութիւն չունի:

Քաղաքական վերլուծաբան Յակոբ Պատալեան, կը պնդէ, որ վերջին 20 տարիները ցոյց տուին, որ Ատրպէյճանը միշտ ալ դէմ եղած է զարաբաղեան հարցի փուլային լուծման տարբերակին:

Վերլուծաբանը համակարծիք չէ նաեւ Տէր-Պետրոսեանի հնչեցուցած այն մտքին, որ զարաբաղեան հակամարտութեան լուծման բանալին Ռուսիոյ ձեռքն է. «Կարծում եմ՝ Ռուսաստանի ձեռքին է գտնուում շանթաբի բանալին, եւ այս առումով, իսկապէս, դա ակնյայտ իրողութիւն է: Այդ շանթաբից դուրս գալու համար էլ հայկական կողմին պէտք է հապէս փոխել մօտեցումը եւ ռազմավարութիւնը՝ հակամարտութեան կարգաւորման»:

Ռուսիոյ հարցով նոյն կարծիքին է նաեւ քաղաքագէտ Ստիոբա Սաֆարեանը: Փորձագէտի խօսքով՝ մոսկովեան ծրագիրը կ'ենթադրէ, որ զարաբաղա-ատրպէյճանական շփման գիծին պէտք է տեղակայուին ռուսական խաղա-

ղապահ ուժերը, բան մը, որուն ըստ Սաֆարեանի դէմ արտայայտուած են եւ՝ Միխիլի խումբի ամերիկացի համանախագահը, եւլ նախագահ Սերժ Սարգսեանը:

Վերլուծաբաններու կարծիքով՝ համագումարի իր ելոյթով առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան փորձած է մեծցնել ՀԱԿ կուսակցութեան քաղաքական դերակատարութիւնը Սերժ Սարգսեանի ու Միջազգային հանրութեան մօտ:

Փորձագէտները համակարծիք չեն նաեւ Տէր-Պետրոսեանի այն մտքին հետ, որ Հայաստանէն արտագաղթի հիմնական պատճառը զարաբաղեան պատերազմի վերակաման վտանգն է:

«Հակառակը, եթէ իսկապէս գնայ տարածք յանձնելու եւ անվտանգութեան գոտին նեղացնելու դիսկուրս, դա արդեօք չի բերի արտագաղթի հենց Արցախի բնակչութեան շրջանում», աւելցուցած է Պատալեան: Ան, առաջին նախագահի հետ մէկ հարցով համաձայն է՝ «Վտանգը, որ Հայաստանում կայ այդ մօտեցման առումով, ոչ թէ այն է, որ Տէր-Պետրոսեանը շարունակում է լինել դրա կրողը, այլ որ Տէր-Պետրոսեանից բացի չկայ այլընտրանքային տարբերակ ձեւակերպուած, որպէս քաղաքական բովանդակութիւն, ռազմավարութիւն, հեռանկար», - ըսաւ Պատալեան:

ԼՈՒՐԵՐ

Զեկոյց - «Հայաստանի Իշխող Վարչակազմի ու Ժողովուրդի Միջեւ Անդունդ կը Խորանայ»

«Հայաստանը շրջադարձի վրայ է՝ տնտեսութեան վիճակը կը շարունակէ մնալ վատ, բնակչութիւնը սկսած է յոգնիլ քաղաքական գործիչներէն ու անոնց որոշումներէն, մինչ անվտանգութեան մակարդակը երթալով կը վատանայ, ինչը ակնառու դարձաւ Ապրիլին՝ Ատրպէյճանի հետ քառօրեայ պատերազմի ժամանակ», - յայտնած է Քարնէկի հիմնադրամի ծաւալուն զեկոյցը՝ անկախութեան 25 տարիներու վերաբերեալ:

«Հայաստանի Իշխող վարչակազմի ու ժողովուրդի միջեւ անդունդ կը խորանայ՝ պաշտօնական երեւանի վերահսկողութենէն դուրս գտնուող շարք մը երեւոյթներու եւ իր իսկ թոյլ տուած սխալներու պատճառով», - արձանագրած է կեդրոնի եւրասիական գծով առաջատար փորձագէտ Փօլ Սթրոնսկի, ընդգծելով՝ հայաստանցիները այլեւս պատրաստ չեն նախկինի նման հաշտուիլ սահմանափակ ժողովրդավարութեան ու տնտեսական դժուար կացութեան հետ՝ միայն յանուն անվտանգութեան:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի քաղաքական համակարգը որակելով քառասուն, փորձագէտը նշած է՝ ընդդիմախօսները կարող են քննադատել կառավարութեան ու հրապարակաւ քննարկել խնդիրները, սակայն, ընտրութիւններու կամ սահմանադրական այլ ճանապարհով քաղաքականութեան վրայ ազդելու հնարաւորութիւնը կը մնայ սահմանափակ:

Զեկոյցին մէջ բաւական ծաւալուն անդրադարձ կայ Հայաստանի երեք նախագահներուն: «Չնայած դարբադեան պատերազմի յաղթանակին՝ անկախութեան առաջին տարիները մոտ չուցուր էին, զնաճը հասաւ աննախադէպ մակարդակի, բնակչութեան կէսը յայտնուեցաւ աղքատութեան մէջ: Սրա հիմնական պատճառը պատերազմն ու Խորհրդային միութեան փլուզումն էր, բայց մեղադրանքներու մեծ մասը բաժին հասաւ Լեւոն Տէր-Պետրոսեանին», - ըսած է զեկոյցը:

«Քոչարեանի ղեկավարումը համընկաւ տնտեսութեան դանդաղ վերականգնման հետ, Հայաստանի կազմի, ելեկտրականութեան ու երթեւեկի ենթակառուցուածքները սկսան կրկին աշխատել: Քոչարեանի օրօք կառավարութեան անպատասխան կամ անոնց հետ մերձաւոր իշխանութիւններու փոքր խումբ մը սերտ վերահսկողութիւն հաստատեց տնտեսական դաշտին մէջ: Զկարգաւորուած դարբադը»

Թրամփի Ընկերութիւնը Խզած է Պաքուի Հետ Պայմանագիրը

Ինչպէս յայտնած է CNN-ը, ԱՄՆ նորընտիր նախագահ Տոնալտ Թրամփի Trump Organization ընկերութիւնը «տան մաքրման աշխատանքներով» խզած է Ատրպէյճանի հետ կնքած պայմանագիրը:

Այս մասին յայտնած է Թրամփի իրաւաբան Ալան Կարտէն: Վերջինս տեղեկացուցած է, որ 2 պայմանագիր վերաբերած է Պրազիլիտոյ (Ռիօ տէ Ժանէյրօ), միւսը՝ Պաքուի մէջ Trump Luxury Hotel անուանմամբ բարձր դասի հիւրանոցներու կառուցման: Այդ Թրամփի Ատրպէյճանի հետ կապող միակ բիզնես-գործարքն էր:



Փորձագէտ Փօլ Սթրոնսկի,

եան խնդրի պատճառով Հայաստանը դուրս մնաց տարածաշրջանի կենսաթափանցիչ ու երթեւեկային ծրագրերէն, աւելցաւ կախուածութիւնը Ռուսիայէն»:

«2008-ի քաղաքական ճգնաժամը՝ տասը գոհերով, ի սկզբանէ ստուերեց Սերժ Սարգսեանի նախագահութիւնը, որ ստիպուած էր բախիլ շարք մը մարտահրաշխանքներու՝ պաշտօնը ստանձնելով համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներուն», - փաստած է փորձագէտը՝ բաւական մանրագնահատելով երկրորդ եւ երրորդ նախագահներուն ու անոնց խումբերուն միջեւ ի յայտ եկած տարաձայնութիւններուն վրայ:

«Մենաշնորհները, կաշառակերութեան բարձր մակարդակը, թոյլ արդարադատութիւնը, ոչ թափանցիկ քաղաքական համակարգն ու պատերազմի շարունակական վտանգը կը ստիպեն մարդկանց հեռանալ երկրէն», - փաստած է զեկոյցը, ընդգծելով՝ Գաղթի միջազգային կազմակերպութեան տուեալներով հայաստանցիներու մօտ 24 տոկոսը 2015 թուականին ապրած է երկրի սահմաններէն դուրս:

Անդրադառնալով յառաջիկայ ընտրութիւններուն, փորձագէտը նշած է. «Շատեր կը կարծեն, որ վերջին սահմանադրական փոփոխութիւններով Սերժ Սարգսեան մտադիր է նախագահութեան ժամկէտէն յետոյ վարչապետ դառնալ իշխանութիւնը իր ձեռքը պահելու համար, սակայն, հաշուի առնելով երկրին մէջ աճող դժգոհութիւնն ու քաղաքական հակառակորդներու միջեւ մրցակցութիւնը, այդ ծրագիրը կրնայ վտանգաւոր լլլալ», - արձանագրած է Քարնէկի հիմնադրամի առաջատար փորձագէտ Փօլ Սթրոնսկին:

ԱՄՆ նախագահական ընտրութիւններէն առաջ յայտարարուած էր, որ Trump Hotel-ի բացման արարողութիւնը յետաձգուած է:

Ըստ CNN-ի՝ Թրամփին կը պատկանին աւելի քան 500 ընկերութիւն, մօտաւորապէս 150 գործարքներ 25 օտարերկրեայ պետութիւններու մէջ, ներառեալ՝ Թուրքիա, Քաթար եւ Սէլտական Արաբիա:

Թրամփը՝ Twitter-ի վրայ նշած էր, թէ կը ծրագրուէր իր գործարքները փոխանցել իր երեխաներուն, մինչ նախագահի պաշտօնը ստանձնելը:

«Թայմ» Վերահրատարակած է Հայոց Ցեղասպանութեան Մասին Յօդուածը, որ Տպագրուած էր 100 Տարի Առաջ

Բրիտանական The Times-ը ներկայացուցած է այն յօդուածը, որ թերթին մէջ տպագրուած էր՝ 14 Դեկտեմբեր, 1916-ին:

Յօդուածին մէջ, ներկայացուած են փաստաթուղթեր, որոնք կը վկայեն 1915-ի ողբերգական իրադարձութիւններու մասին: Յօդուածին մէջ, նշուած է, որ Օսմանեան Թուրքիոյ մէջ մօտ 1.8 մլն հայ կը բնակէր: Անոնցմէ մի քանիին հարկադրած է իսլամութիւն ընդունիլ, միւսները սպանուած են կամ ալ կը գտնուէին Թուրքիա, սարապիւլի պայմաններու մէջ: Փաստաթղթերուն մէջ նկարագրուած են նաեւ՝ հայ կանանց ու աղջիկներու նկատմամբ սարսափելի վերաբերմունքի օրինակներ:

«Բաւական է միայն մէկ փաստ, որպէսզի ցոյց տանք, թէ ինչ յատուկ մանրակրկտութեամբ կ'իրականացուէր հայերու տեղահանութիւնն ու մասնակի ոչնչացումը: Անցեալ տարի էրզրում, Պիթիս ու Վան վիլայէթներուն (Նահանգներուն) մէջ կը բնակէր մօտ 580 հազար հայ: Երբ այդ շրջանները անցան ռուսերու հսկողութեան տակ, այնտեղ միայն 12100 հայ կար: Մնացեալը կամ մահացած էին, կամ տեղահանուած», - ըսուած է յօդուածին մէջ:

Հեղինակները նաեւ նշած են,



որ զանգուածային սպանութիւնները համակարգուած ու միտումնաւոր բնույթ ունէին ու նախապէս ծրագրուած են կոստանդնուպոլսոյ մէջ: «Շրջանը շրջանի ետեւէն, մինչեւ ամբողջ ասիական քաղաքներուն ու գիւղերուն Թուրքիոյ մէջ հայկական թաղամասերը չղատարկուեցան», - շեշտուած է յօդուածին մէջ:

Հեղինակները նշած են, որ այդ իրադարձութիւններու համար հիմնական մեղքը երիտ. թուրքերուն է, սակայն մեղաւորները ոչ միայն կոստանդնուպոլսոյ մէջ են, այլեւ Պերլինի, ուր այդ իրադարձութիւններու վրայ աչք փակած են:

Հանրային Լսումներ Պոլսոյ Հայոց Նոր Պատրիարքի Ընտրութիւններուն Ընդառաջ



Պոլսոյ հայոց նոր պատրիարքի հաւանական ընտրութիւններուն ընդառաջ, Ստամբուլի հայ համայնքի առաջին հանրային լսումները կայացած են՝ քննարկելու ու թ տարի հայ գործընթացը արդէն իր հանգամանքներն ու պատճառները:

Տարիներ շարունակ պատրիարք ընտրելու պահանջով հանդէս եկած նախաձեռնողական հարթակը Ստամբուլի հայաշատ Ֆերիքէօյ թաղամասի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ սրահին մէջ հանդիպած է շուրջ 300 համայնքային անդամներու հետ, լսած կարծիքներ ու առաջարկներ, ինչպէս նաեւ հանդէս եկած յայտարարութեամբ:

«Այօս» թերթի փոխանցմամբ, հանդիպման ընթացքին համայնքի անդամներէն մէկը նշած է, որ պատրիարքի ընտրութեան հարցը պէտք է բարձրացուի թրքական խորհրդարանին մէջ ներկայացուած հայ պատգամաւորներուն կողմէ:

Ի պատասխան՝ սրահին մէջ ներկայ թուրքիոյ ժողովրդահանրապետական կուսակցութեան հայազգի պատգամաւոր Սելինա Տոզան ըսած է, որ համայնքի ներքին խնդիրները իրենց օրակարգին մէջ

են, սակայն իրատեսական չէ սպասել, որ անոնք լուծում կը ստանան Միլի մէջլիսին մէջ:

Հոկտեմբերի վերջը Պոլսոյ Հայոց պատրիարքարանին մէջ տեղի ունեցած եկեղեցական ընդհանուր ժողովի ժամանակ, հոգեւոր խորհուրդը, առաջնորդուելով եկեղեցական կանոնադրութեամբ եւ աւանդույթներով, 2008 թուականէն ի վեր ծանր հիւանդութեան պատճառով փաստացիօրէն անգործունակ վիճակի մէջ գտնուող ներկայ պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի ուխտը լուծարուած համարած էր՝ օրակարգ բերելով նոր պատրիարք ընտրելու հարցը:

Ըստ օրէնքի, պատրիարքի ընտրութեան թոյլտուութիւն իրաւասու է տալ Ստամբուլի նահանգապետարանը՝ զայն համաձայնեցնելով ներքին գործերու նախարարութեան հետ:

«Ուզում ենք ճանչնալ բոլոր թեկնածուներուն, իմանալ, թէ ինչ մօտեցմամբ պիտի ծառայեն համայնքին: Մենք ընդամենը կը ցանկանք մեր պատրիարքին ընտրել, օգտագործել մեր ժողովրդավարական իրաւունքը», - ըսուած է ժողովի վերջը յայտարարութեան մէջ:

Իրաւապաշտպանները Դատապարտած են Վահան Արծրունցի Դետապնդումը



Յայտնի երաժիշտ Վահան Արծրունցին յայտարարած է, որ իրեն երկու օր առաջ զանգահարած է Գրիգոր անունով մէկը, ներկայանալով որպէս ՀՀ ազգային անվտանգութեան ծառայութեան աշխատակից, հրաւիրած է գրոյցի ԱԱԾ: Այդ մասին ըստեղծ է իրաւապաշտպան կազմակերպութիւններու տարածած յայտարարութեան մէջ:

«ԱԱԾ-ում մօտ 40 րոպէ տեւած գրոյցի ընթացքում Վահան Արծրունցն տուել են այնպիսի հարցեր, որոնցով կամեցել են պարզել նրա քաղաքական դիրքորոշումը, մասնակցել է արդեօք հանրահաւաքների եւայլն: Հարցաքննութիւնը չի արձանագրուել, Վահան Արծրունցն չեն իրազեկուել նրա իրաւունքները հրաւիրել եւ ոչ պաշտօնական հարցաքննութեան ընթացքում: ԱԱԾ-ում ունեցած գրոյցից յետոյ երաժիշտի ֆէյսպուքեան էջը ընկերների համար արգելափակուել է:

Տեղի ունեցածը մենք գնահատում ենք որպէս ոչ միայն քաղաքացու ազատութիւնների եւ իրաւունքների կոպիտ ոտնահարում, այլեւ անթաքոյց հասարակում, ենթադրաբար, այն հաշուով, որ մարդիկ խուսափեն ազատօրէն արտայայտել իրենց կարծիքը, ինքնազրաքննուեն, չմասնակցեն այն հաւաքներին, որոնք անցանկալի են իշխանութիւնների համար, դադարեն քաղաքացի լինել եւ վերածուեն հարկատու կամակատարների:

ԱԱԾ-ն քաղաքացուն առանց ծանուցագրի հրաւիրելով ոչ պաշտօնական հարցաքննութեան, կատարել է անօրինական գործողութիւն, ինչը պէտք է իրաւական եւ քաղաքական գնահատականների արժանանայ հասարակական, քաղաքական ուժերի եւ ՀՀ գլխաւոր դատախազութեան կողմից:

ՀՀ ԱԱԾ ղեկավար Գ.Կուտոյեանից պահանջում ենք միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ԱԱԾ-ի կողմից «ՆԿՎԴ-ԿԳԲ»-ի գործելու, թոյլ չտալու համար քաղաքացիներին նկատմամբ ապօրինութիւն, դադարեցնել քաղաքացիների ահաբեկման փրաքթիքան, վարչական քննութեան ենթարկել Վահան Արծրունցը եւ կապուած այս միջադէպը եւ պատասխանատուութեան ենթարկել զանցառուներին: ԱԱԾ պաշտօնեաները պէտք է գործեն բացառապէս ժողովրդավարական եւ իրաւական պետութեան սկզբունքներին համապատասխան, հասկանալի, որ ՀՀ ազգային անվտանգութեան հենքը ազատ քաղաքացիներն են եւ նրանցով ստեղծուած իրաւական պետութիւնը, եւ ոչ թէ վերադաս իշխանութիւնը ու իրաւագուրկ քաղաքացին: Ազգային անվտանգութեան հաստատման համար հարկաւոր է քաղաքացուն պաշտպանել անօրէն իշխանութիւնից եւ ոչ թէ անօրէն իշխանութեանը՝ ազատ քաղաքացիներից»:

Յայտարարութիւնը ստորագրած են Հայաստանի Հելսինկեան կոմիտէն, Լրագրողներու «Ասպարէզ» ակումբը, Հելսինկեան քաղաքացիական խմբակցութեան Վանաձորի գրասենեակը եւ Բաց հասարակութեան հիմնադրամներ-Հայաստանը:

«Խաւիարային Քաղաքականութեան»

Շարունակուած էջ 1-էն

որոնք կը համարուին կաշառատուութեան հիմնական իրագործողները:

«Եւրոպական կայունութեան նախաձեռնութեան» գեկոյցը կը պնդէ, որ անհրաժեշտ է անյապաղ

սառնեցնել կաշառատուութեան մէջ կասկածեալ Սուլէյմանովի եւ Մամատովի լիազօրագրերը, ինչպէս նաեւ ԵՄԽՎ-ի Ատրպէյճանի պատուիրակութիւնը գրկել 2017-ի ձմեռային նստաշրջանին ձայնի իրաւունքէն եւ հետաքննել տեղի ունեցածը:

«Կրին Քարտի» Խաղարկութեամբ

Շարունակուած էջ 1-էն

2010-էն ի վեր աւելի քան կրկնապատկուած է, տրամադրուող անցագրերու թիւը կը տատանի 1000-էն 2000-ի միջեւ: Այսինքն խաղարկային ծրագրի մասնակիցներ

րու առիթները ամէն տարի կը նուազին: Եթէ 2010-ին խաղարկութեան մասնակցած է 62,051 քաղաքացիներու շուրջ 2 տոկոսին ներգաղթային անցագիր շնորհուած է, 2016-ին անցագիր ստացած է յաշտատուներու ընդամենը 1 տոկոսը:

Քննարկում՝ Նուիրուած ԵՄ-Հայաստան Նոր Պայմանագրի Շուրջ



Երէկ՝ 14 Դեկտեմբերին, «Հայաստանի Եւրոպացի Բարեկամներ» կազմակերպութեան (EuFoA) նախաձեռնութեամբ Պրիւքսէլի մէջ տեղի ունեցած է քննարկում՝ նուիրուած ԵՄ-Հայաստան նոր շրջանակային պայմանագրի շուրջ ընթացող մէկամեայ բանակցութիւններու արդիւնքներու ամփոփման:

Քննարկման ժամանակ ելոյթ ունեցած են ՀՀ Տնտեսական գործազանց եւ ներդրումներու նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնեանը, Արեւելեան գործընկերութեան երկիրներու վարչութեան պետ Տիրք Շուպելն ու Եւրոպական յանձնաժողովի առեւտուրի գլխաւոր տնօրինութեան՝ Ռուհիոյ, ԱՊՀ, Ուքրանիոյ, Արեւմտեան Պալքաններու, ԵԱԱԱ (EFTA), ԵՏԳ (EEA) եւ Թուրքիոյ Հարցերով բաժանմունքի ղեկավար Պետրոս Սուրմելիսը: Քննարկման, որու համակարգողն էր Եւրոպական քաղաքական ուսումնասիրութիւններու կեդրոնի հետազօտող, քաղաքական գիտութիւններու թեկնածու Հրանդ Կոստանեանը, մասնակցած են աւելի քան 40 լրագրողներ, դիւանագէտներ, ԵՄ կառույցներու, միջազգային հասարակական կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ տարբեր հետազօտական կեդրոններու ներկայացուցիչներ:

Իր ելոյթին, պարոն Շուպել ներկայացուցած է բանակցային գործընթացի քաղաքական տեսանկիւնները, ընդգծելով, որ Հայաստանը՝ ինքը պէտք է որոշէ, թէ որքանով պատրաստ է ընդունելու ԵՄ պայմանները:

Իր հերթին, պարոն Սուրմելիսը եւս մէկ անգամ շեշտեց, որ բանակցութիւնները կ'ընթանան դրական մթնոլորտի մէջ՝ արձանագրելով արագ առաջընթաց «առեւտուրի եւ ներդրումներու» ոլորտին մէջ: «Նոր համաձայնագիրը շատ աւելի մօտ կ'լինի արդեն գոյութիւն չունեցող «Խորը եւ համապարփակ ազատ առեւտուրի պայմանագրին», քան ներկայիս «Գործ ընկերութեան եւ համագործակցութեան համաձայնագրին», այդուհանդերձ, ամենաբարձր հարցերը թողնուած են քննարկման վերջին փուլին», -նշեց Սուրմելիսը:

Պարոն Մելքոնեանը իր խօսքին մէջ պարզաբանեց, որ այս «Ազատ առեւտուրի համաձայնագիրը» չէ, եւ առեւտուրի ամբողջական գերազատականացում չպէտք է ակնկալել, այդուհանդերձ, նոր համաձայնագրով նախատեսուած է որոշ սակագիներու իջեցում: Անդրադառնալով բանակցութիւններու ժամանակացոյցին՝ պարոն Մելքոնեան նշեց. «Մեզ շատ աւելի մտահոգում է բովանդակութիւնը, քան ժամանակացոյցը: Մեզ համար աւելի կարեւոր է հասնել լաւ արդիւնքի, ցոյց տալով, որ Հայաստանը՝ իր ուժեղ ու կայուն քաղաքական, տնտեսական եւ վարչական համակարգով, կարող է իտիալական միջավայր ապահովել թէ՛ ԵՄ, եւ թէ՛ ԵԱՏՄ ու իրանի ներդրումների համար»:

Պատասխանելով վիզայի ազատականացման վերաբերեալ հարցին՝ պարոն Շուպել շեշտեց, որ Եւրոպական արտաքին գործողութիւններու ծառայութիւնը (EEAS) պատրաստ է բանակցութիւններ սկսիլ Հայաստանի հետ վիզայի ազատականացման գործընթացի շուրջ:

Պարոն Մելքոնեան ամփոփեց քննարկումը՝ շեշտելով, որ չնայած թէ Հայաստան ունի պարտաւորութիւններ այլ համալրման գործընթացներու մէջ եւս, սակայն «այս բանակցութիւնները ցոյց են տալիս Հայաստանի հաւատարմութիւնը ԵՄ-ին, որը եղել եւ մնում է ՀՀ հիմնական առեւտրային գործընկերը»:

EuFoA-ի տնօրէն Տիեկօ Փինթոն քննարկման աւարտէն յետոյ նշեց, որ միջոցառումը յաջողած է: «Ես վստահ եմ, որ երկու կողմերու յաւանութիւններն ու կառուցողական մօտեցումը կը հանգեցնեն գործընթացի դրական աւարտին, եւ Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագիրը շուտով կը ստորագրուի»:

12 Նոյեմբեր, 2015-ին, Արտաքին յարաբերութիւններու խորհուրդը լիազօրեց Եւրոպական յանձնաժողովին եւ Բարձր ներկայացուցչին սկսիլ բանակցութիւններ Հայաստանի հետ՝ նոր, պարտադիր իրաւական ուժ ունեցող, համալիր համաձայնագրի շուրջ՝ տրամադրելով համապատասխան բանակցային լիազօրագիրը: Բանակցութիւններու պաշտօնական մեկնարկը տրուեցաւ 7 Դեկտեմբեր, 2015-ին: Նոր համաձայնագիրը կը փոխարինէ գործող ԵՄ-Հայաստան Գործընկերութեան եւ համագործակցութեան համաձայնագրին:

Շահանգները ամէն տարի կը նուազին: Եթէ 2010-ին խաղարկութեան մասնակցած է 62,051 քաղաքացիներու շուրջ 2 տոկոսին ներգաղթային անցագիր շնորհուած է, 2016-ին անցագիր ստացած է յաշտատուներու ընդամենը 1 տոկոսը:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net



**Զօրացիւք
Օժանդակէնք
Փրկէնք**

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

ՍԱՐՖ \$100,000 Տոլարի Փոխանցում մը Ըրաւ Սուրիոյ ՇՏԱՊ-ին

Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմին ՍԱՐՖը, հաղորդակցելով Սուրիոյ ՇՏԱՊի ներկայացուցիչներուն հետ, Սուրիոյ պատերազմական վերջին կացութեան պայմաններուն ի տես. նկատի առած, որ վերջին չորս տարիներուն Սուրիոյ լարուած պայմանները խլելին մեր ժողովուրդի առօրեայ կեանքի խաղաղութիւնն ու ապահովութիւնը:

Իրագել ըլլալով, Սուրիոյ մասին վերջին յայտարարուած տեղեկութիւններուն, որ մասամբ լաւատեսութիւն կը ներշնչեն Զալէպի մէջ ապրող եւ թէ գաղթական դարձած մեր հայրենակիցներուն եւ մեր իսկ վրայ... սակայն պատերազմը վերջ չէ գտած եւ Զալէպահայութիւնը տակաւ կ'ապրի, ապագայի նկատմամբ, անորոշութեան եւ մտավախութեան դժուարին պայմաններու մէջ:

ՍԱՐՖը կը մնայ հաստատական իր ուխտին, օժանդակելու սուրիահայ մեր քոյրերուն եւ եղբայրներուն մինչ դժուարին պայմանները իրենց լրումին հասնիլն ու մեր հայրենակիցներու ապահով վերադարձը իրենց ընտանեկան օճախները:

Կը տեղեկացնենք, որ վերջին օրերուն ՍԱՐՖը 100,000 ԱՄՆ տոլարի փոխանցում մը ըրաւ «Սուրիոյ Արտակարգ Վիճակներու եւ Վերականգնումի Մարմին» ՇՏԱՊին, նպաստելու Զալէպի մէջ ապրող մեր հայրենակիցներու դժուար պայմաններու բարեկարգման, ինչպէս նաեւ Երեւանի մէջ կայք գտած սուրիահայ մեր հայրենակիցներու բնակարանային հաստատման ի տես:

Առ այդ, ՍԱՐՖի փոխանցումը 2016 ընթացիկ տարուան մէջ առ այսօր կը հաշուէ 784,000 ԱՄՆ տոլար:

ՍԱՐՖը իր երախտագիտութիւնը կը յայտնէ նուիրատու մեր հայրենակիցներուն, որոնք օգնութեան ձեռք երկարեցին կենաց եւ մահու մէջ ապրող, սուրիահայ մեր հայրենակիցներու կեանքի ապահովութեան ի տես. Վստահ ենք, որ մեր նիւթաբարոյական օժանդակութիւնը տակաւ պիտի շարունակուի յաջորդող շաբաթներու եւ ամիսներու ընթացքին:

Չոր նուիրատուութիւնները կրնաք փոխանցել՝ ՍԱՐՖի նամակատուի P.O.Box 1948, Glendale, CA 91209 եւ կամ ՍԱՐՖի www.syrianarmenianreliefund.org կայքէջով:

Սուրիահայութեան Օժանդակութեան Սիացեալ Գործադիր Մարմին

**Վարչապետ Կարէն Կարապետեան.
«Ամէն Ինչով Աջակցելու Ենք Բոլոր
Ծրագրերուն, Որոնք Ուղղուած Են
Սուրիահայերու՝ Զայաստան Մնալուն»**



Վարչապետ Կարէն Կարապետեան այսօր ընդունած է Հայաստանի մէջ տարբեր ոլորտներ ներկայացնող խումբ մը սուրիահայ գործարարներ՝ անոնց յուզող հարցերը լսելու եւ լուծման տարբերակները քննարկելու նպատակով:

Ըստ կառավարութեան պաշտօնական կայքէջի, սուրիահայ գործարարները բարձրացուցած են, մասնաւորապէս, տնտեսական համալրման խնդիրներով զբաղելու համար ստեղծուած «Սուրիահայերու Միութիւն» հասարակական կազմակերպութեան գործունէութեան, տեղական արտադրութեան խթանման ու արտահանման, վարկաւորման, օրէնսդրական դաշտին վերաբերող, ինչպէս նաեւ այլ հարցեր:

«Մենք ամէն ինչով աջակցելու ենք բոլոր այն ծրագրերին, որոնք ուղղուած կը լինեն սիրիահայերի՝ Հայաստանում մնալուն: Դուք իրականում մշակոյթ էք փոխել Երեւանում, պիզնեսի, ծառայութիւնների ոլորտում, եւ ձեր կայացումը մեզ համար չափազանց կարեւոր է»,- ըսած է Կարէն Կարապետեան:

Կառավարութեան ղեկավարը նշած է, որ պետութիւնը պատրաստ է օժանդակութիւն ցուցաբերել սուրիահայ գործարարներուն՝ յորդորելով անոնց իրենց գործարքներու ծրագրերն ու առաջարկութիւնները ներկայացնել տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութիւն:

**Յայտեաց Բարբարոս Լէյլանիին
2 Տարուան Պայմանական Ազատագրկման
Դատապարտուած**

Սթոքհոլմի շրջանային դատարանը 14 Դեկտեմբերին վճիռ կայացուցած է Շուէտի թրքական կազմակերպութիւնները համադրող կեդրոնի նախկին փոխնախագահ Պարպարոս Լէյլանիի գործի առնչութեամբ, որ Ապրիլ 9-ին Շուէտի ատրպէյճանական, թրքական եւ թուրքմէնական շարք մը համայնքային կազմակերպութիւններու կողմէ Սթոքհոլմի կեդրոնին մէջ կազմակերպուած ցոյցի ժամանակ հանդէս եկած էր բացայայտ հայտեաց եւ ազգայնամոլական յայտարարութիւններով:

Դատարանը վճռած է, որ Շուէտի քրէական օրէնսգիրքի 16 յօդուածի 8 մասի 2-րդ կէտի համաձայն Լէյլանին կատարած է էթնիկ խումբի դէմ ատելութիւն սերմանող յանցագործութիւն ծանրացուցիչ հանգամանքներով: Ըստ դատարանի վճիռին՝ Լէյլանիի նկատմամբ սահմանուած է պատիժ երկու տարուայ պայմանական ազատագրկման եւ տուգանքի վճարման տեսքով:

Դատապաշտպանը առաջարկած էր սահմանափակուել տուգանքով՝ հիմնաւորելով, որ մեղադրեալը կը գտնուէր անկայուն հոգեկան վիճակի մէջ, օգտագործած է ուժեղ դեղորայք եւ ելոյթ ունեցած է առանց պատրաստուելու:



Այսպիսով դատարանը որոշեց ամբողջութեամբ բաւարարել դատախազի պահանջը եւ Լէյլանիի ազգայնամոլական եւ հայտեաց վարքագիծը որակել որպէս քրէական յանցագործութիւն:

Յիշեցնենք, որ Շուէտի մէջ Ապրիլ 9-ին Սթոքհոլմի կեդրոնական Սերգէյ Թորի հրապարակին վրայ ատրպէյճանաթրքական ցոյցի ժամանակ հակահայկական արտայայտութիւններ հնչեցուցած է թուրք գործիչ Պարպարոս Լէյլանին, որ հանրահաւաքի ընթացքին օգտագործած էր «շուն հայերը պէտք է զգուշանան, մահ՝ հայ շուններուն» արտայայտութիւնը:

**Նշուեցաւ Ուրուկուայի Հնչակեան
Մասնաճիւղի Հիմնադրութեան 90-ամեակը**



Կիրակի, Դեկտեմբեր 18-ին, Մոնթեվիդոյի Հնչակեան Ակումբի պարտէզին մէջ նշուեցաւ Մայր Կուսակցութեան Ուրուկուայի մասնաճիւղի հիմնադրութեան 90-ամեակը:

Օրհնութեան խօսքով ելոյթ ունեցաւ Առաջնորդ՝ Յակոբ Արք. Գէլէնճեանը, բարձր գնահատելով Հնչակեան Կուսակցութեան գործունէութիւնը եւ վարած քաղաքականութիւնը:

ՄԴՀՎ վարիչ Մարմինի անունով ելոյթ ունեցաւ շրջանի վարիչ Մամին ատենապետ Դանիէլ Մանուէլեանը, որ յարգելով հիմնադիրները, խոստացաւ շարունակել աշխատանքները, վառ պահելու համար մեր մեծերու ոգին:

Այս առթիւ ընթերցուեցաւ ՄԴՀՎ Կեդրոնական վարչութեան ողջոյնի գիրքը, ուր ըսուած էր. «Մ.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անունով կու գանք ողջունելու Ձեզ՝ Ձեր շրջանի Հնչակեան կուսակցութեան հիմնադրման 90-ամեակի առիթով»:

Արդարեւ, Հարաւային Ամերիկայի սրտին մէջ, 90 անընդմէջ տարիներ՝ մեր կուսակցութեան աշ-

խոյժ ներկայութիւնը բոլորիս համար հպարտութեան աղբիւր է եւ պերճախօս վկայութիւնը, այն բոլոր հաւատաւոր ընկեր-ընկերուհիներու զոհողութեան եւ պարտականութեան բարձր գիտակցութեան, որոնք հասնելով այդ հեռավոր ափերը, հիմնախնները դարձան հայ գաղութին՝ Մոնթեվիդոյի մէջ հիմնելով «Հայկազեան վարժարան» անունով առաջին հայկական դպրոցը եւ «Հնչակեան Տունը»:

«Անգամ մը եւս, կը շնորհաւորենք Ուրուկուայի շրջանի Հնչակեան կուսակցութեան հիմնադրման 90-ամեակը եւ կը մաղթենք Ձեզի բեղուն գործունէութիւն եւ նորանոր յաջողութիւններ, ի փառս հայ ժողովուրդի եւ Մայր Կուսակցութեան»:

Կարգացուեցաւ նաեւ Արժանիքի շրջանի ողջոյնի խօսքը: Հանդիսութեան ընթացքին Կուսակցութեան քայլերգը հնչեց ընկ. Երուանդ Կանիմեանի ձայնով, «Երեւան 50» նուազախումբի ընկերակցութեամբ: Անոնք նաեւ խանդավառեցին հանդիսութիւնը հայկական երաժշտութեամբ:

7ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՐԲՈՑ ԴԵԻՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ



Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեանի հրահրով Երեքշաբթի, Դեկտեմբեր 7ին, 2016 Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցուց Արեւմտեան Թեմը վերածուած էր Մեծագոյն Լոս Անճելլոսի տարածքի Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններու Կեդրոնի, որու ընթացքին կազմակերպուեցան չորս տարբեր Միջ-Եկեղեցական հաւաքներ:

Օրը սկսաւ Արեւելեան Ուղղափառ Քոյր Եկեղեցիներու (Oriental Orthodox Churches) համատեղ ժողովով, որուն մասնակցեցան Ղպտի, Ասորի եւ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցուց բարձրաստիճան հոգեւորականներ: Արեւմտեան Թեմը կը ներկայացնէին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան եւ Թեմի Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Բագրատ Մ. Վրդ. Պերճէքեան: Ժողովը միտուած էր տարածաշրջանի Արեւելեան Ուղղափառ Քոյր Եկեղեցիներու առաւել սերտ համագործակցութեան, ինչպէս նաեւ գալիք 2017 թուին միասնական միջոցառումներու կազմակերպման:

Կէսօրին կայացաւ Հարաւային Գալիֆորնիայի Քրիստոնէական Համագումարի «Հաւատք եւ Կարգ» Յանձնախումբի (Southern California's Christian Forum, Faith and Order Commission) հերթական հանդիպումը, որուն հիմնական նիւթը Քաղկեդոնի 451 թուի ժողովի հետեւանքով առաջ եկած եկեղեցիներու բաժանման հանգամանքներու եւ միութեան հնարաւոր հեռանկարներու վերլուծումն էր: Ժողովի ուսումնասիրութեան հիմք հանդիսացան 1964-1971 թուական-

ներուն Արեւելեան Ուղղափառ եւ Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներու միջեւ տեղի ունեցած ոչ պաշտօնական հանդիպումներու ընթացքին ձեռք բերուած համաձայնագիրները: Ժողովին ներկայ էին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցուց, Լուտերական Եկեղեցուց երկու հիմնական ճիւղերու, Քրիստոսի Աշակերտներ Եկեղեցուց (Disciples of Christ), Ղպտի Եկեղեցուց եւ Ասորիքի Արեւելեան Եկեղեցուց ներկայացուցիչներ: Հայց. Առաքելական Եկեղեցին ներկայացուած էր Թեմիս Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Բագրատ Մ. Վրդ. Պերճէքեանի եւ Թեմիս Միջ-Եկեղեցական յարաբերութիւններու վարիչ Տնօրէն՝ Տիար Հայկ Մատոյեանի կողմէ:

Կէսօրէ յետոյ ժամը 3:00ին կայացաւ Հարաւային Գալիֆորնիայի Քրիստոնէական Համագումարի (Southern California's Christian Forum) հերթական հաւաքը, որուն մասնակցեցան շուրջ տասը տարաբնոյթ յարանուանութիւններու ներկայացուցիչներ: Համագումարի հիմնական նիւթը Գործ Առաքելոցի 4:23-37 համարներուն մէջ գրուած Սուրբ Գրային նիւթի միասնական սերտողութիւն-վերլուծութիւնն էր, որուն յաջորդեցին խմբային քննարկումներ, միտուած՝ Քրիստոնէայ Եկեղեցիներու միջեւ առաւել սերտ համագործակցութիւն հաստատելու հնարաւորութիւններ: Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցին կրկին ներկայացուած էր Թեմի Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Բագրատ Մ. Վրդ. Պերճէքեանի

Շար.ը էջ 18

ՏԻԱՐ ԳԵՈՐԳ ԱՆԹԱՊԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱԻ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



Յովնան Արք. Տէրտէրեան Տէր եւ Տիկին Անթապեաններուն հետ

Իր աւանդութիւնը յարգելով այս տարի եւս Լոս Անճելլոսի Ս. Յակոբ Հայաստանեայց Եկեղեցին, անցեալ Կիրակի Դեկտեմբերի 18ին, 2016, իւրաքայտուկ հանդիսութեամբ նշեց իր անուանակոչութեան եւ հիմնադրութեան 74րդ տարեդարձը: Օրուան պատարագիչն էր Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, առընթերակալութեամբ եկեղեցուց հովիւ Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեանի:

Պատարագի աւարտէն առաջ տեղի ունեցաւ յատուկ արարողակարգ, որու ընթացքին հոգեւոր հովիւ Տ. Յարութիւն քահանան կարդաց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի հայրապետական կոնդակը, որով «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ շքանշանով կը պարգևատրուէր Տիար Գեորգ Անթապեանը, իր տասնեակ տարիներու մատուցած անձնուէր ծառայութեանց համար: Առաջնորդ Յովնան Սրբազան իր օրուան պատգամին մէջ անդրադարձաւ նաեւ պարգևատրեալ Տիար Գեորգ Անթապեանի երկարամեայ եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւններուն, բարձր գնահատելով անոր անսակարկ նուիրումն ու ծառայական ոգին:

Պատարագի աւարտին, եկեղեցուց շրջաբակին մէջ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն, պատուոյ յուշակոթողին առջեւ, ի յիշատակ եկեղեցուց պայծառութեան սատարած վաստակաշատ նուիրեալներու: Արարողութեան նախագահեց Գերշ. Յով-

Համերգի աւարտին ելոյթ ունեցաւ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան: Ան նկատել տուաւ, որ սուրիահայութիւնը ծանր օրեր ապրեցաւ եւ տակաւին կ'ապրի աւելցնելով, որ այդ դժուարին պայմաններու մէջ հայրենիքը սրտբաց ընդունեց գիրենք եւ 22 հազար սուրիահայ հաստատուեցան Հայաստանի մէջ: Նախարարը ըսաւ, որ իրենք ջանք չեն խնայեր, որպէսզի այդ սուրիահայերը հաստատուն կանգնին իրենց սեփական հողին վրայ եւ յայտնեց, որ պետութիւնը նաեւ նիւթապէս օգտակար կը հանդիսանայ անոնց եւ կրթութիւնը, բժշկութիւնն ու մշակոյթը անվճար է: Անդրադառնալով Արեւիկ Թանաշեանի համերգին, ան ըսաւ, որ Արեւիկ ուզած է օգտակար հանդիսանալ սուրիահայերուն այս համերգի միջոցով եւ բարձր գնահատեց անոր նախաձեռնութիւնը: Հրանուշ Յակոբեան ըսաւ, որ Արեւիկ Թանաշեանը Հայաստանի երկրաշարժէն փրկուողներէն է եւ փոքր հասակէն ան ստացած է բարձրագոյն կրթութիւն, որուն մէջ մեծ դերակատարութիւն ունեցած է նաեւ «Գոհար» համոյթը յանձինս Գոհար Խաչատուրեանի, որուն օժանդակութեամբ Կիւմրիի մէջ հարիւրաւոր երաժիշտներ, արուեստագէտներ, երգիչներ ներկայիս մշակութային գործերով կը զբաղին: Նախարարը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Գոհար Խաչատուրեանի, որ ներկայ էր համերգին, հայրենիքին օգնելու, հայկական մշակոյթը տարածելու, հայ արուեստը աշխարհի ներկայացնելու իր տարած աշխատանքին համար: Իր խօսքը ուղղելով լիբանանահայութեան ան ըսաւ. «Կ'ուզեմ, որ դուք հպարտ զգաք,

Շար.ը էջ 19

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՅՈՒՆԱՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ 120-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



Երկուշաբթի, Դեկտեմբերի 12-ին, Յոյն գրողների միութիւնը (ՀԳՄ) կազմակերպել էր միջոցառում՝ նշելու հայկական պոեզիայի յունարէն թարգմանութեան 120 ամեակը: Միջոցառման կազմակերպմանը մասնակցել էին, Յունահայկական ուսումնասիրութիւնների կենտրոնը, ՀԲԸՄ մասնաճիւղը եւ «Արարատ» ՄՄ միութիւնը:

Երեկոյի բացման խօսքում, ՀԳՄ նախագահ Կոստաս Կառուստան ասաց, որ կազմակերպուած միջոցառումը, ըստ էութեան առաջինն է իր բնոյթով, որ երբեք կազմակերպուել է Յունաստանում եւ ներողութիւն ինդրեց այն բանի համար, որ Յոյն գրողների միութիւնը 70-ամյա ուշացումով է կազմակերպում նման միջոցառում, որով Յոյն հանրութեանն աւելի է մօտեցնում հայ գրականութեան -

յոյս յայտնեց, որ նմանատիպ միջոցառումները կշարունակուեն:

Իսկ Յոյն ԳՄ փոխնախագահ Պավլոս Նաթանելը ընդգծեց, որ եթէ պատմութիւնը յոյներին եւ հայերին միացնում է, ապա երկու ժողովրդների մշակութային կապը նրանց յարաբերութիւնը խորացնում է:

Ապա «Կապուղիատրիայի» անվան Աթէնքի պետական համալսարանի դասախօս՝ դոկտ. Համբիկ Մարուքեանը անդրադարձավ այն հարցին, թէ ինչպէս Համիդեան ջարդերի ժամանակ յոյն հանրութիւնը ծանօթացաւ հայկական բանաստեղծութիւնների յունարէն առաջին թարգմանութիւններին (առաջինը՝ Միքայէլ Նալբանդեանի «Ազատութիւն», 1895 թ.) եւ յաւելեց, որ

Շար.ը էջ 19

Advertisement for the play 'Lend Me a Tenor' by Ken Ludwig, directed by Krikor Satamian. The ad features the AGBU Satamian Theatre Group logo, the title in large stylized letters, and a cartoon illustration of a man in a tuxedo. It lists performance dates (January 14-15, 21-22, 28-29, 2017) and venue (A.G.B.U. Vatche & Tamar Manoukian Center). Ticket information and contact details are also provided.

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՈԼԵՃ



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Պէյրուլթի Հայկազեան Գոլէճը (Haigazian College) հիմնուած՝ Հոկտեմբեր 1955-ին, ապա ար-ժանապէս կոչուած Haigazian University College (1992-1996), եւ Դեկտեմբեր 1996 թուականին սկսեալ ճանչցուած որպէս Haigazian University Լիբանանի պետութեան կողմէ, եղած է ու կը մնայ սփիւռքահայ կեանքի ամէնէն բարձր ուսումնարանը եւ բոլորիս հպարտութիւն պատճառող հայկական համալսարանը:

Ամերիկահայ աւետարանական համայնքի եւ մասնաւորաբար երկու հաճընցիներու՝ Ստեփան Մեխակեանի ու Ստեփան Փիլիպպոսեանի անձնական ջանքերով եւ անոնց կողմէ եղած նիւթական ու բարոյական աջակցութեամբ, Պէյրուլթի մէջ հայ ուսուցիչ պատրաստելու վեհապետ նպատակով ստեղծուած Հայկազեան Գոլէճը (կոչուած ի պատիւ Եղեռնի զոհ Տոքթ. Արմենակ Հայկազեանի՝ տնօրէնը Գոնիայի ձենանեան ձեմարանի եւ ուսուցիչը Ստեփան Մեխակեանի եւ հայրը անոր կնոջ՝ Մարիի), եղած է նաեւ կնոջս՝ Սուսիի ու իմ ծանօթավայրը, երբ երկուքս ալ, ինք գալով Երուսաղէմէն եւ ես ալ Թրիփոլիէն, հոն հանդիպեցանք 1966 թուականին: Ծատ մը մը հայրորդիներ այդ գոլէճին մէջ հանդիպելով կամ ուսանելով եւ ազգային շունչով հոն ստորուելով՝ դարձան աշխարհատարած ներկայութիւն ունեցող մասնագէտներ, ուսուցիչներ եւ ազգային գործիչներ:

Վերջերս մեծ հաճոյքով կարդացի Տոքթ. Ճան Մարգարեանի անգլերէնով գրուած գիրքը, որ կը կոչուի "The Thirsty Enemy, A Memoir", որ ինձի տրուեցաւ յարգելի բարեկամ եւ վաստակաշատ, կարող Վերապատուելի Եսայի Սարմազեանի կողմէ: Տոքթոր Մարգարեան եղած է առաջին տնօրէնը Հայկազեանի եւ հոն պաշտօնավարած է ամբողջ 22 տարի (1955-1966 եւ 1971-1982): Գիրքը կարդալէս ետք, յոյժ կարեւոր նկատեցի հայ ընթերցողին փոխանցելու կարգ մը հետաքրքրական կէտեր, որ վստահ եմ շատեր չեն գիտեր նախկին Հայկազեան Գոլէճի եւ այժմ համալսարանի մասին:

1.- Հայկազեան Գոլէճը անցեալ դարու վաթսուական թուականներուն, Մանուկ Մանուկեան ուսուցիչին առաջնորդութեամբ, հռչակաւոր դարձած է որպէս հրթիռներ արձակելու կարողութեամբ օժտուած աշակերտներու գոլէճ, միակն ու առաջինը ամբողջ Միջին Արեւելքի տարածքին:

2.- Հայկազեան Գոլէճը, որ 1955 թուականին ունէր միայն 43 աշակերտ, այժմ ունի մօտաւորա-

պէս հազար հոգի հաշուող աշակերտութիւն, որոնք կու գան աշխարհի 20 տարբեր երկիրներէ: Այժմ այդ համալսարանին կը վկայուին արուեստի եւ գիտութեան չորս մարդերու մէջ, Bachelor of Arts եւ Bachelor of Sciences, ինչպէս նաեւ MBA աստիճանի վկայականներով աշակերտներ:

3.- 1982 թուականին, Իսրայէլի կողմէ կատարուած Պէյրուլթի պաշարման շրջանին, Հայկազեանը, ըստ London Sunday Times հռչակաւոր շաբաթաթերթի թղթակիցին, եղած է յարատեւումը կարելի դարձնող (survival possible) կեդրոնը այդ քաղաքի կէս միլիոն մարդոց, երբ Հայկազեան Գոլէճի վարչակազմն ու աշակերտութիւնը դարձած են ամէնէն մեծ անդամութեան բաղադրարարը պատերազմի կեդրոնները վարող անձնակազմը արեւմտեան Պէյրուլթի մէջ, 180 մթերանոցներէ հայթայթելով սնունդ 3000 ընտանիքի եւ ամբողջ քսան հազար հաշուող գաղթականներու:

4.- Լիբանանի ներկայ վարչապետ Թամմամ Սալամ եղած է Հայկազեան Գոլէճի աշակերտ՝ նախկին դարու վաթսուական թուականներու կէսերուն: Գոլէճը եղած է

Շար.ը էջ 19

ՄՈԼԵԳՆԱԾ ԱԶԱՌ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Այս ինչի մասին գրում եմ, ահանախեմի պատմած է:

Հարա-հրոցով, գոռում-գոռումով եւ բուռոցներով մի խումբ մարդիկ, նրանց մէջում երեք թիկնեղ մսագործներ դանակները օղում ճօճելով վազում էին կատաղած աչառի յետեւից կանչելով, ժողովուրդ, բռնեցէք աչառին, մի՛ թողէք փախչի:

Այսպէս սկսեց մեր ընկերը դէպքի մասին:

Նա սովորական աչառ չէր, ցուլի պէս սուր եւ կեռ կոտորներով հսկայ եւ հուժկու շագանակագոյն մորթով մէկը, ով կը յանդգնէր նրա առջեւ դուրս գար այդ մոլեգնած վիճակում, փիղը նոյնիսկ չէր դիմանար: Աչառը բովանդակ ուժով վազում էր, կարծես վազքի մրցութեան էր դուրս եկել, իսկ նրա տէրերը նոյնպէս վազքով հետեւում էին նրան օգնութեան կանչեր հնչեցնելով:

Ա՛յ ընկեր, որտեղից սկսուեց այդ աչառի գժութիւնը.

Մեր Թեհրանի փողոցներից մէկում այլ ազգի հարեւան ունենք, նա այս տարի իրենց նշանաւոր կրօնական առաջնորդի համար, որ դարեր առաջ նահատակուել է ճակատագրական մի անհասարար մարտի ընթացքում իր կողմնակիցների հետ միասին, նա պաշտամունքի սգահանդէս էր կազմակերպել, որը կատարուում է ամէն տարի ժողովրդական խուռներամ մասնակցութեամբ իրենց յատուկ մշակոյթով եւ արարողակարգով:

Ինչպէս թէ յատուկ արարողակարգով.

Դէ՛հ, ամէն ժողովուրդ իր ազգային տօներն ու սգի օրերն ունի իրենց սովորութիւններով: Նրանք իրենց իմբական յիշատակման հաւաքոյթներում, ձրի սնունդ՝ հոգեճաշ են մատուցում մասնակցողներին եւ նաեւ բաժանում հարեւաններին, անցնող ու դարձողին, յիշատակի խօսքեր են ասուում եւ սգում: Այդ նպատակով աչառի

մտով կերակուր պիտի պատրաստուէր: Ես տեսայ, թէ ինչպէս բեռնատար մեքենայով աչառին բերին դռան առջեւը, պատրաստ խմբակը դանակաւոր մսագործների միասնական օգնութեամբ աչառին զգուշութեամբ իջեցրին, կապկպեցին որ գլուխը կտրեն, ես էլ չիմացայ, թէ աչառը ինչպէս կայծակի արագութեամբ եւ վիթխարի թափով իրեն կապանքներից ազատելով փախուստի դիմեց, շուրջի մարդիկ ապշած տեսարանից ընկան նրա յետեւից:

Դու կարող ես ասել փախուստի պատճառը ի՞նչ է եղել, ինչպէս տեղեակ ես ամէն շարժում եւ անդրադարձ թէ՛ բնութեան եւ թէ՛ մարդկութեան յարաբերութեան մէջ իր դրդապատճառն ունի:

Գուշակում եմ որ նրան մեքենայից իջեցնելու եւ կապանքների ժամանակ էր մարդկանց ձեռքում դանակ տեսնելով մահուան սարսուռ է անցել նրա մարմնով, այդու ընդվզելով փրկութեան է դիմել:

Աչառը մեր երկար փողոցը արագութեամբ կտրելով պտտուեց դէպի աջ աւելի լայն բանուկ պողոտայ, մարդիկ նրան տեսնելով վախից մի կողմ էին քաշուած ճամբայ բացելով, պողոտան կրկնսի տեսք էր ստացել: Աչառը մահից էր փախչում, ով արգելք լինէր նրան կը կործանէր եւ առաջ կը գնար:

Խեղճ աչառ, ինչ մեղք էր գործել, որ զոհ պիտի դառնար, եթէ կենդանին լեզու ունենար պիտի բղաւէր եւ բողբէր մարդկութեան դէմ անխիղճ վերաբերմունքի համար, բայց ով պիտի ուշադրութիւն դարձնէր, թոյլերը զոհ են դառնում...:

Ոչ մի մարդ քաջութիւն չգտաւ աչառին մօտենալու, նա մէն-մենակ յաղթական դուրս էր եկել իրեն շրջապատած մարդկանց դէմ եւ վայելում էր մահից առաջ փրկութեան ազատութիւնը, ուժով

Շար.ը էջ 19

MARTIAL ARTS - ORGANIZED by
GAIDZ YOUTH ORGANIZATION

SEVAK HAKOBYAN
 4th dan
INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

- ❖ MARTIAL ARTS
- ❖ SELF-DEFENSE
- ❖ FOR MEN, WOMEN, CHILDREN & PEOPLE WITH DISABILITIES OF ALL AGES

WORLD RECOGNIZED INSTRUCTOR

❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS

ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
 For registration and info text: 626-926-7224 or email: info@gaisz.net

FOLLOW US ON: Instagram @Gaidzyo; Facebook Gaidz Youth Organization; Twitter @GaidzYouth

«ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՌՆԱԼ»

ՄԵՐԻ ԽԱԶՍՐԵԱՆ



Ես Մերին եմ, Շիրակի դաշտավայրում մեծացած մի հայուհի: Որպես Մարզու՝ իմ կայացման համար պարտական եմ նախ եւ առաջ պապիկին (ով բազմամեայ մանկավարժ էր եւ Ղարաբաղեան պատերազմի մասնակից): Միրում էի պապիկին հետ գբօսնել մեր արտերում, լսել նրա պատմութիւններն ու խրատները: Նա հարուստ գրադարան ուներ, դա նաեւ իմ սիրելի անկյունն էր: Դեռ ես չիմանալով լիարժէք կարդալ, ես միայն լսողի դերում էի: Պապիկս մէջբերելով իր կարդացած գրքերի հերոսների պատմութիւնները, ասում էր, «տե՛ս, իմ փոքրիկ Մերի կեանքը լի է անակնկալներով, հրաշքափութիւններով եւ ձեռքբերումներով ինչպէս այս հերոսներինն է: Փորձի՛ր բոլոր պարագաներում մնալ Մարզ, մեծահոգի բոլորի հանդէպ, այնքան անմեղ ու «միամիտ» ինչպէս որ հիմա ես, չկոտորուես, ու երբեք չհրաժարուես քո երազանքներից: Ասում էր վատահ եմ՝ դու բարձունքների ես հասնելու (չգիտեմ, թէ ինչու էր այդքան վատահ), բայց չդառնաս երբեք գոռոզ ու ինքնահաւան: Միշտ կը ձգտես աւելիին: Ես՝ 6 տարեկան փոքրիկ աղջիկս, ապրում էի երազներով, իմ ամենանուիրական երազանքներից էր ճամբորդելը, բացառապէս աշխարհը: Միեւնոյն ժամանակ հոգուս խորքում վախենում էի, որ գուցէ այդ ամէնը երազանք էլ մնայ: Այն ժամանակ, ես չէի էլ կարող ակնկալել, որ այդ փոքրիկ աղջիկը կարող է մի օր յայտնուել օվկիանոսից այն կողմ՝ գտնելու իր երազը: Մի անգամ դիտում էի «Աշունը Նիւ Եորքում» ֆիլմը եւ ինքս ինձ մտածում. «Տեսնես երբեք հնարաւորութիւն կ'ունենա՞մ գբօսնել Նիւ Եորքում աշնանը», տեսնել այդ երջնաքերերը:

պէտք էր յարմարուել: Այնքան դժուար է, երբ քայլում ես փողոցով եւ չկայ ոչ մի ծանօթ դէմք, իր, առարկայ: Ի՞նչ անել, ինչպէ՞ս ընդունել քեզ խորթ թուացող երեւոյթները: Յիշողութեանս մէջ դեռ թարմ է իմ առաջին օրը ամերիկեան դպրոցում՝ որն անխօս ծանր էր: Ես մտածեցի, որ ամերիկեան երիտասարդների այդ հասարակութիւնը ինձ երբեք այլեւս չի ընդունի: Տուն վերադառնալով սկսեցի ճամպրուկներս հաւաքել...բայց...մի՞թէ ես իրաւունք ունէի այդքան շուտ յանձուելու: Այդ պահին սկսեցի վերջիչել եւ արժեւորել պապիկին խորհուրդները: Սկսեցի անդադար սովորել, կատարելագործել անգլերէնս, շփման եզրերը փնտռել իմ դասընկերների հետ:

Անցան ամիսներ. ես շուտով համարեցի դպրոցի լաւագոյն աշակերտների շարքը, ստացայ պատուոգրեր, արժանացայ յոտնկայս ծափահարութիւնների՝ 100 ժամ հանրօգուտ աշխատանք կատարելու եւ նախագահական շքանշանով պարգևատրուելու համար: Այդ պահին կարծես ողջ աշխարհն իմն էր: Ես այդ նոյն փոքրիկ աղջիկն էի, ով 10 տարի առաջ թերահաւատօրէն էր վերաբերում իր երազանքներին եւ հրաշքներին: Բայց ինչպէս Պ. Կոէլիոն է վկայում. «Կեանքն էլ հենց նրանով է հետաքրքիր, որ երազները կարող են իրականութիւն դառնալ: Յանկարծ, բոլորին սկսեց հետաքրքրել, թէ որտեղից եմ էր եւ որտեղ է գտնուում այդ փոքրիկ երկիրը Հայաստանը: Մարդիկ, որոնք սկզբում այդքան անտարբեր էին, երբ իրենց թուում էր, թէ Հայաստանը լոկ ԱՄՆ -ի նահանգներից մէկն է, այժմ միմեանց հերթ չտալով ուզում էին իմանալ աւելին: Ես էլ ոգեւորուած շարադրում էի իմ ազգի պատմութիւնը, աւանդոյթները, մշակոյթը: Տպաւորիչ էր նաեւ իմ հանդիպումը դպրոցի թեմիսի մարզիչի հետ, ով հայ էր, բայց չէր խօսում հայերէն եւ երբեք չէր եղել իր հայրենիքում: Երբ որպէս ծանօթութեան նշան նրան պարզեցի ձեռքս, աչքերն արցունքոտ պատասխանեց. «Սա պատասխանատու պահ է ինձ համար, քանի որ ես առաջին անգամ եմ Հայի ձեռք սեղմելու, երբեք չեմ հանդիպել իմ հայրենակիցներին»: Մի՞թէ չարժեք յաղթահարել այդ բոլոր խոչընդոտները, կարօտը եւ

ՀԱՅ ԱԼԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ-ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԼՈՍ ԱՆՃԸԼՍԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱՇԿԵՐՈՅԹԸ



Հայ Ալետարանական Շամլեան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի Լոս Անճըլլսի Շրջանաւարտից Միութեան տարեկան հինգերորդ ճաշկերոյթը տեղի ունեցաւ Նոյեմբեր 5, 2016ին Կլէնտէյլի «Ֆինիսիա» ճաշարանին մէջ: Վարժարանի շրջանաւարտներուն, նախկին ուսուցիչներուն, համակիրներուն եւ հիւրերուն շար-


եւ բարի վայելում մաղթելով ներկաներուն եւ ապա հրաւիրեց օրուան հանդիսավարը Պրն. Տէնի Կէօզրիպոյլիքեանը, որը հեղասահօրէն վարեց սոյն ձեռնարկը: Վերապատուելի Պերճ Ճամպագեան կատարեց ձեռնարկին բացման աղօթքը: Շրջանաւարտից միութեան ատենապետ Պրն. Զաւէն Հանէսեան,



քին էին Հայ Ալետարանական Միութեան Վերապատուելի Պերճ Ճամպագեան, Հայ Ալետարանական Միութեան նախագահ Տօքթ. Նազարէթ Տարաքեան, Հայ Ալետարանական Միութեան նախկին վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, պատուելի Յովհաննէս Մելքոնեան, դատաւոր Զարեհ Սիմանեան, Հայ Դատի Յանձնախումբի ատենապետուհի իրաւաբան Նորա Յովսէփեան եւ վարժարանիս նախկին տնօրէն Պրն. Արամ Պուլլուրճեան: Ձեռնարկին բացումը կատարեց շրջանաւարտից միութեան յիսատենապետուհի Տիկին Լիզա ձիկերեան Մանոյեան, բարի գալուստ

խօսք առնելով, ողջունեց ներկաները եւ գնահատեց բոլորին ներդրումը եւ օժանդակութիւնը մեր սիրելի վարժարանին նկատմամբ, նաեւ դրուատեց միութեան բոլոր անդամներուն անշահախնդիր աշխատանքը, որուն իբրեւ արդիւնք միութիւնը վերջին հինգ տարիներուն ընթացքին բաւական յատկանշական նիւթական օժանդակութիւն առաքած է վարժարանին: Իր կարգին խօսք առաւ սոյն ձեռնարկին համար Լիբանանէն ժամանած տնօրէնուհին՝ Օրդ. Վարդուհի Պալքեանը, եւ ներկանե-

Շար.ը էջ 19



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

ԸՆՏԱՆԻՔՆ ԱՄՈՒՐ Է, ԵԹԷ ԱՅՆՏԵՂ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ ՄԻՏՈՒՄ ԿԱՅ

Ամուր հիմերով ընտանիք ստեղծելու գլխավոր նախապայմաններն են մեկը այն է, որ նոր կազմավորվող այդ «համակարգը» բարենպաստ միջավայր ըլլայ անդամներին իրաքանչիւրի անձնական զարգացման համար: Յիշենք, որ ընտանիքը սերունդը շարունակելու գործիք է: Նման մտածողութեան արդիւնքն է, որ կը հանդիպինք համատեղ կեանքի այդքան չյաջողած դէպքերու: Եթէ մտածենք ընտանիքի մասին կեանքի նոր փուլի անձնական զարգացման տեսանկիւնէն, միանգամայն պիտի առաջնորդուինք այլ սկզբունքներով՝ ընտանիք ստեղծելու ընթացքին:

Անկեղծօրէն հարցուցէք դուք ձեզի. «Իսկ այս մարդու հետ ընտանիք կազմելով՝ ի՞նչ զարգացում կ'ակնկալուի ինձմէ: Ան պատրաստ է յառաջընթացի իր կեանքին մէջ: Իսկ զիս կը հետաքրքրէ՞ զարգացման անոր ընտրած ուղին»: Եթէ ունիք երազանքներ եւ ծրագիրներ, որոնց իրականացումը կարեւոր է ձեզի համար եւ վտանգուած՝ նորաստեղծ ընտանիքի պարագային, հաւատացէք, որ ձեր միութիւնը արդէն ամուր հիմերու վրայ է. անբաւարարուած

ծութիւնը օր մը գլուխ պիտի բարձրացնէ: Ի հարկէ, պիտի հարցնէք, թէ ուր մնաց սէրը այս դատողութիւններու կողքին: Զոյգերու մեծ մասը այդպէս ալ կը վարուի. կը սիրահարուին եւ կ'ամուսնանան, որովհետեւ «չեն կրնար ապրիլ առանց մէկը միւրին: Բայց շատ շուտով պարզ կը դառնայ, որ միայն սէրը քիչ է: Երիտասարդ ընտանիքը կը բախի կենցաղային խնդիրներու, կը մեծնան յաւակնութիւնները իրարու հանդէպ, եւ նոր միայն ի յայտ կու գան այն անհամատեղելիութիւնները, որոնք կը քողարկէր «սէր»ը: Ընտանիք պէտք է կազմել անոր հետ, որ կ'երթայ նոյն ուղղութեամբ, որով դուք կ'երթաք, ի դէպ՝ նոյն արագութեամբ:

Երբ ընտանիքը նպաստաւոր միջավայր կը դառնայ անձի անհատական զարգացման համար, կարելի կ'ըլլայ նաեւ «սիրել»ը, եւ չի ստեղծուի իրավիճակ, երբ «հոգիդ բան մը կ'ուզէ, բայց պարտադրուած է հաշտուելու եղածին հետ»: Ատիկա կը քայքայէ նախ մարդը, յետոյ՝ անխուսափելիօրէն նաեւ այն միջավայրը, որ «կը ճգմէ» զինք, այս պարագային՝ ընտանիքը:

ՁԵՐ ԴԵՄՔԻՆ ՁԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԷ ՁԵՐ ՄԱՍԻՆ

Դէմքին ձեւը կրնայ բացայայտել անձի տեսակը, պատմել անոր կեանքի սկզբունքներուն մասին: Թէեւ մարդոց մեծամասնութիւնը ունի համադրուած դիմաձեւ, օրինակ, կլոր եւ քառակուսի համարուութիւն, այնուամենայնիւ, կան մարդիկ, որոնց դիմաձեւը յստակ կը հասկցուի:

Ուղղանկիւն դիմաձեւ: Այս դիմաձեւով մարդիկ ունին քառակուսի ճակատ եւ կզակ: Անոնք կը տարբերին նախանձելի տրամաբանութեամբ եւ շատ լաւ մտածողութեամբ, սակայն շատ ջանք կը գործադրեն իրենց մտորումներուն մէջ: Իբրեւ կանոն անոնք կը ծրագրեն քայլերը եւ հազուադէպ կը խօսին իրենց զգացումներուն մասին: Մշտապէս յառաջացող ներքին լարուածութիւնը հանելու համար անոնք կ'աշխատին ջանասիրաբար:

Կլոր դիմաձեւ: Այսպիսի դիմաձեւը կը բնորոշուի յստակիւնները. թմբկիկ այտերով: Ատիկա ցոյց կու տայ, որ անձնավորութիւնը բարի է, այլ մարդոց հետաքրքրութիւնները կը դասէ իր նախասիրութիւններէն վեր: Այդ պատճառով, այսպիսի մարդիկ սովորաբար կ'ենթարկուին ինքնահաւան եսասէրներուն:

Աղամանդի ձեւ: Սուր ճակատ եւ քիթը շեղանկիւն կը ստեղծեն երկարաւուն այտակերբու օգնութեամբ: Այդպիսի մարդիկ կը սիրեն իրավիճակը իրենց հսկողու-

թեան տակ վերցնել: Անոնք կեղերունացած են մանրուքներու վրայ, ինչի շնորհիւ անոնք կ'ըլլան լաւ աշխատողներ: Յստակ են իրենց խօսքերուն մէջ եւ լաւ կապ կ'ունենան այլ մարդոց հետ:

Հակադրութեամբ դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին երկարաւուն դէմք: Անոնք գիտեն բոլոր ճիշդ բաներու մասին եւ կրնան ըսել այնպիսի բառեր, որոնք անպայման հաճելի կը թուին խօսակիցին: Անոնք կը տրամադրեն իրենք իրենց հանդէպ, սակայն շատ կեղերունացած են անթերի երեւնալու ցանկութեան վրայ:

Քառակուսի դիմաձեւ: Ոչ մեծ դէմք՝ լայն ճակատով եւ կզակով: Այսպիսի մարդիկ շատ համբերատար են եւ լի խանդավառութեամբ:

Սրտանման դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին լայն ճակատ եւ նեղ կզակ: Անոնք ունին անհաւանական ներքին ուժ եւ շատ յամառ են: Այդ ներքին ուժը գանոնք կը տանի դէպի դրուած նպատակներու իրականացում: Անոնք ունին ուժեղ ներքին ձայն:

Տանձանման կամ եռանկիւն դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին նեղ ճակատ եւ լայն ներքին ծնօտ: Անոնք կ'ուզեն ըլլալ գլխավորը: Այս տեսակի մարդիկ շատ յաճախ յաջողակ կ'ըլլան: Հնարաւորութիւններու սահմաններուն մէջ լաւ խնամուած ըլլալ:

Երազները դուռ են դէպի մեր գիտակցութիւն եւ հոգեւոր աշխարհ:

Վերլուծելով քնացած մարդոց ուղեղը՝ ճաբոնցի գիտնա կանները եկած են այն եզրակացութեան, որ մենք կը տեսնենք երազները նոյնքան իրական, որքան արթուն ժամանակ՝ իրա կան շրջապատող աշխարհը: Ի՞նչ կը նշանակեն կեր-

ՍՈՒՐԾԻ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրճի հայրենիքը Եթովպիան է, ուր պահպանուած են անոր վայրի մացառուտները: Սուրճի ծառը առաջին անգամ նկարագրած է գերմանացի բժիշկ Ռաուվելֆը (1573 թուականին): Արեւմտեան Հայաստանի մէջ սուրճի ըմպելիի տարածումը է 16-րդ դարու սկիզբը: Հետաքրքրական է, որ 1672-ին Ֆրանսայի մէջ բացուած առաջին սրճարանին տէրը՝ Փասկալ անուսով, հայ եղած է:

Հիւսիսային Ամերիկայի մէջ սուրճ օգտագործած են 1670-ին: Սուրճը կը մշակուի 17-րդ դարէն Եմենի մէջ: Այդ երկրի Մոգո անահանգիստէն անիկա արտահանուած է աշխարհով մէկ: 20-րդ դարու սկիզբը սուրճ տեղափոխող նաւերէն մէկուն բեռնախցիկը փոթորիկի պատճառով ջուրով լեցուած է: Բեռնախցիկներէն յետոյ նկատած են, որ այդ սուրճէն պատրաստուած ըմպելիի ազդեցութիւնը աւելի թոյլ է: Այդ պատահականութեան շնորհիւ սուրճը ստացած է աւելի մեծ տարածում, քանի որ քաֆէինի փոքր տոկոս պարունակող սուրճը կրնայ իմել նաեւ առողջական խնդիրներ ունեցող մարդիկ: Եւ այսպէս. եթէ կ'ուզէք տնային պայմաններու մէջ նուազեցնել քաֆէինի տոկոսը, ուստի հատիկները որոշ ժամանակ պահեցէք ջուրի մէջ: Քիչ անց անոնք պիտի ուռին: Զուրէն առանձնացուցէք հատիկները եւ լուացէք հոսող ջուրի տակ: Քաֆէինի պարունակութիւնը չմշակուած հատիկներուն մէջ կը տատանուի:

Լուծուող սուրճի մէջ քաֆէինի պարունակութիւնը աւելի բարձր է: Որոշ հետազոտողներ կը հաւաստիացնեն, որ լուծուող սուրճը բարենպաստ ներգործութիւն ունի մարմնի վրայ, որ անիկա ցանկալի է խմել կաթի կամ սերուցքի հետ խառնած վիճակով, սակայն ոչ անօթի ստամոքսին: Սուրճէն պատրաստուած ըմպելիները արտադրուած բարերար ազդեցութիւն ունին հիփոթոնիայով հիւանդներու վրայ: Ժխտական ազդեցութիւն կ'ունենան սիրտ-անօթային որոշ հիւանդութիւններու, 12-մատնեայ աղիքի եւ ստամոքսի խոցի պարագային: Որեւէ հիւանդութեան պարագային սուրճի չափաբաժինը պէտք է որոշէ բժիշկը: Սուրճը կը պարունակէ քաֆէին (1,2%), ջուր

(12%), շաքարանիւթեր (8%), սրճաթթու (9%), բջիջանիւթ (25%), ազոթային միացութիւններ (13%), ֆենոլային միացութիւններ, պիրիդին, քացախաթթու, վիթամին PP, E եւ այլ նիւթեր: Բովելէն յետոյ ճարպերու, ազոթային միացութիւններու եւ քաֆէինի պարունակութիւնը քիչ մը կ'աւելնայ, իսկ ջուրի, շաքարի, սրճաթթուի պարունակութիւնը կ'իջնէ 2-4 անգամ: Նիացինը (վիթամին PP) կը մասնակցի ուժանիւթի արտադրման բջիջներուն մէջ:

Սուրճը կը նուազեցնէ քոլեսթերոլի եւ ճարպի պարունակութիւնը արեան մէջ, կը լայնցնէ արիւնատար անօթները եւ կ'իջեցնէ ճնշումը, կը հանգստացնէ գլխացաւը, կը վերացնէ աղմուկը ականջներուն մէջ, օգտակար է գլխապտոյտի պարագային, կը բարելաւէ մարսողութիւնը, կը կանխէ սրտի կաթուածները:

Խորհուրդ կը տրուի քրոնիկ հիւանդութիւններու՝ լեարդի ցիռոզի, շարորակ ուռուցքներու, յատկապէս շագանկագեղձի ատենոմայի, փանքէաթիտի պարագային: Քաֆէինի ցած պարունակութիւնը առանձնապէս չ'ազդեր սուրճի բարերար յատկութիւններուն վրայ: Նիացինը կ'օգնէ նաեւ յոգնածութեան, մկանային թուլութեան, վատ ախորժակի, սթոմաթիտի, լինտերու հիւանդութիւններու, սրտխառնուքի պարագային: Կը վերացնէ բերանի տհաճ համը եւ հոտը:

Սիսեռը շատ լաւ կը համակցուի սուրճի հետ, կ'աւելցնէ սուրճի օգտակար ազդեցութիւնը: Սուրճի եւ սիսեռի յարաբերութիւնը խառնուրդի մէջ կ'որոշէ խմողը: Շատ կարեւոր է նիացինի հետեւեայ յատկութիւնը. Կը նպաստէ սերոթինի արտադրութեան, կը պարզեւէ առողջ քուն եւ երջանկութեան զգացողութիւն: Վերջերս հետազոտութիւններու միջոցով պարզուած է, որ սուրճի լուծամզուածքը (իւղային, ջրային, սփիրթային) կը բերէ թուքի արտադրութեան յառաջացող կազերու նուազում: Այդ կազերը բաւական տհաճ հոտ ունին: Սովորական ձեւով պատրաստուած սեւ սուրճը չի յանգեցնէր նման արդիւնքի: Գիտնականները փորձեր կը կատարեն, որպէսզի ստանան տհաճ հոտերը վերացնող բուրմունք՝ սուրճի հատիկներէն:

Մահ- Մահը սովորաբար կը նշանակէ որեւէ բանի աւարտ ձեր կեանքի մէջ, օրինակ որեւէ փուլի վերջ, սակայն՝ ոչ ձեր մահը:

Կրակ- Երազի մէջ կրակ տեսնել կը նշանակէ, որ ձեր կեանքին մէջ շուտով փոփոխութիւններ պիտի ըլլան: Սպասեցէք յեղաշրջման: Յղութիւն- Ասիկա կը նշանակէ համաշխարհային փոփոխութիւններ կեանքի մէջ: Ընդունեցէք զանոնք:

Չուր- Չուրը ունի դրական նախանշան. մաքրութիւն ու կեանքի նոր փուլի սկիզբ:

Դրամ- Երազի մէջ դրամ տեսնել կը նշանակէ, որ ներկայ պահուն դուք անոր կարիքը ունիք կամ հակառակը, խնդիր չունիք:

Սեռական յարաբերութիւն ուրիշի հետ- Ասիկա կը խօսի այն մասին, որ դուք երջանիկ չէք ձեր գուզանկերով հետ եւ կը թաքցնէք ձեր ցանկութիւնները:

10 ԿԱՐԵՒՈՐ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԴՈՒՔ ԿԸ ՏԵՍՆԵՔ ԵՐԱԶԻ ՄԵՁ

Երազները կ'ըլլան վախցնող, ծիծաղելի, հետաքրքրական: Երբեմն մենք կը տեսնենք երեւակայնի ժանրի երազներ, իսկ երբեմն կը վերապրինք որեւէ իրադարձութիւն: Սակայն ամէն ինչ ունի իր բացատրութիւնը: Մէկ դարէն աւելի է, որ մարդիկ կը փորձեն վերլուծել, հասկնալ երազները: Յայտնի հոգեբաններ կը նշեն, որ

պարները եւ նշանները երազներու մէջ: Ամենատարածուած եւ հետաքրքրական բացատրութիւններ՝ նշուած հոգեբաններու կողմէ.

Թուիչք- Երազները, ուր դուք կը թուիչք, յաճախ ցոյց կու տան ձեր յաւակնութիւններու բաւարարման կամ կեանքի կարեւոր որոշում կայացնելու անհրաժեշտութիւնը:

Իյնալ- Ասիկա յաճախ կը նշանակէ, որ դուք պէտք է վերահսկէք ձեր կեանքի որեւէ իրավիճակ:

Հետապնդում- Հետապնդումը երազի մէջ կը նշանակէ ծանր ապրումներ եւ խնդիրներ: Աշխուժօրէն աշխատեցէք ներկայ ժամանակին բախուող խնդիրներու շուրջ:

Ձեր մերկ մարմինը- Ասիկա սովորաբար կը նշանակէ, որ դուք կը վախնաք որեւէ բանէ, կամ անօգնական կը զգաք դուք ձեզ:

ԱՆՈՒՆՈՎ ԱՊՐԻՍ

ՅԱԿՈՒ ՏԵՐԵԱՆ

Անունովդ ապրիս մեծ հայրիկ: Անունովդ ապրիս քեռայր: Անունով ապրիս խնամի: Անունովդ ապրիս Պրն. Յակոբ: Անունովդ ապրիս... ու ապրիս...:

Մեծ էն ու փոքր էն, հեռու էն ու մօտ էն, հարազատ էն ու բարեկամ էն, անձամբ թէ հեռաձայնով, բոլոր անոնք որոնք կը շնորհաւորեն զիս անուանա տօնին առիթով, կը մաղթն որ անունովս ապրիմ:

Չեմ գիտեր ինչու է այս մաղթանքը որ կը լինեցնեն ինձի ամէն տարի: Մինչդեռ ես նման մտադրութիւն մը չեմ ունեցած երբեք կեանքիս մէջ: Մեր ծնունդէն ինչ անունով որ մկրտած են մեզ եր ծնողները, ըստ ընկալեալ սովորութեան, այդ անունով ալ կ'ապրինք մինչեւ վերջ: Որով ինչու է այս մաղթանքը:

Նոյնն է պարագան նաեւ բոլոր միւս սուրբերուն անուան տօներուն: Թէեւ կարելի է ըսել որ այսօր անուան շնորհաւորանքի աւանդական այդ բարի սովորութիւնները, ի մասնաւորի Ամերիկահայ հին սերունդին մօտ, գրեթէ բոլորովին մոռցուած եւ դադրած է չիշատակուել: Նոյնիսկ շատեր չեն ալ գիտեր, ոչ սուրբերուն եւ ոչ ալ անոնց անուան տօներուն մասին: Սակայն մեզ պէս արեւելեան երկիրներէն եկած եւ տակաւին այդ սովորութիւնները պահողներուն մօտ, նուիրական կը նկատուին այդ շնորհաւորանքները, քանի որ այդ աւանդական սովորութիւնները քիչ

մը իրենց մէջ կը ցոյցանեն յարգանքի, մեծարանքի, մտերմութեան եւ հարազատութեան նման բարեմասնութիւններ, որոնք մարդկային զգացմունքներու դրսեւորումներ են:

Դժբախտաբար այդ սովորութիւնները այս երկիրներուն մէջ կը տեսնեն հազիւ 30-60 տարիներ, նայած ընտանիքներու եւ իրենց արմատներու գորութեան:

Այս ժամանակամիջոցի ընթացքին, տեղական ըմբռնումներն ու աւելի հաճելի թուացող այլ տեսակի տօներ, ինչպէս (Վելլընթայնգ Տէյ)՝ «Դէնքս Կիւինկ»՝ «Հալուին»՝ եւ այլն աւելի նախապատիւ տեղ կը գրաւեն մտայնութիւններու մէջ, մոռացութեան մասնելով մեր աւանդութիւնները:

Ամէն պարագայի լաւ է որ կան տակաւին ընտանիքներ, որոնք կառչած կը մնան իրենց սովորութիւններուն եւ կը շարունակեն զանոնք թէկուզ... «Անունովդ ապրիս»ով:

Մեր հայերէն լեզուի մէջ սովորութիւն դարձած կարգ մը թերի ասացուածքներէն մին է նաեւ այս մէկը «Անունովդ ապրիս»:

Թերի կը կոչեմ զայն, չըսելու համար անիմաստ, քանի որ զայն մաղթողները առանց անդրադարձնալու անոր թերի ու անմիաստ ըլլալուն, անմեղօրէն շիտակ մաղթանք մը տուած ըլլալու հաւանութիւնը ունին: Որով եթէ փորձենք համալրել այս մաղթանքը, պարտինք իւրաքանչիւր Սուրբին անունը տալ իրեն պատշաճ ստորգելիով մը:

Օրինակ Ս. Յակոբ»ին կարելի է ըսել, Անունիդ տիրոջը «սրբութեամբ» ապրիս, կամ ուղակի Ս. Յակոբի «սրբութեամբ» ապրիս:

Լուսաւորիչ «լոյսովը» լուսաւորուիս:

Ս. Գէորգի «քաջութեամբ» ապրիս:

Ս. Սարգիսի «հաւատքի գօրութեամբ» ապրիս:

Ս. Ներսէսի «շնորհքով» ապրիս եւ այլն:

Այսպիսով է որ իմաստաւորած կ'ըլլանք մեր տուած մաղթանքները:

Ուրիշ սխալ մաղթանք մըն է նաեւ մահուան պարագային ցաւակցութիւն յայտնելու ժամանակ ըսել «կեանքը քեզի»:

Սակայն, թէ որուն կեանքը: Ցաւակցութիւնը կը յայտնենք մեռնող մը համար, որոն կեանքը

վերջացած է արդէն: Եթէ աւելի կեանք ունէր պիտի ապրէր ու չմեռնէր: Այնպէս որ անիմաստ է վերջացած կեանքի մը շարունակութիւնը մաղթել ապրող մարդուն:

Հոս սխալը միայն «ը» որոշիչ տարրին գործածութեան մէջն է: Առանց այդ «ը»ի պարտինք ըսել «կեանք քեզի»: Այդպիսով ըսած կ'ըլլանք, որ մեռնողը մեռաւ ու կեանքը վերջ գտաւ, թող Աստուած կեանք շնորհէ քեզի:

Այս տեսակի սխալ արտայայտութիւններ միշտ կրկնելուով այնքան սովորական դարձած են ժողովուրդին համար, որ մարդիկ մեքենայաբար կը կրկնեն զանոնք առանց դոյզն իսկ մտածելու անոնց ճշգրտութեան վրայով:

Յուսանք մարդիկ անդրադարձնան այդ սխալ ասացուածքներուն եւ ուղղեն զանոնք:

ՏԻԱՐ ԳԵՈՐԳ ԱՆԹՈՊԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱԿ

Շարունակուած էջ 7-էն

զանի ձեռամբ պարգեւատրուեցան տիկիներ Շըրլի Մուր եւ Սուզան Վահանեան:

Շնորհաւորական եւ շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Ս. Յակոբ եկեղեցւոյ ժրջան հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յարութիւն քհնյ. Թաշճեան: Նշենք նաեւ որ պատարագի ընթացքին Յովնան սրբազան քարոզի պահուն յատուկ սրբանկարով մը պատուեց Տ. Յարութիւնը, առ ի գնահատութիւն իր օգտաշատ ծառայութիւններուն:

Իր փակման խօսքին մէջ Յովնան Սրբազան անգամ մը եւս շնորհաւորեց մետալակիր Գէորգ Անթապեանը, ինչպէս նաեւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, բոլոր կազմակերպութիւններն ու հաւատացեալները, որոնք զօրաւոր հաւատքով ու խոր գիտակցութեամբ

լծուած են եկեղեցանուէր բազմազան գործունէութիւններուն, միշտ պատիւ բերելով թէ ծուխին եւ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ արեւմտեան թեմին:

Գէորգ Անթապեան ծնած է Հայկազի մօտակայ Ազազ գիւղաքաղաքը՝ 18 Դեկտեմբեր 1925-ին: 1981ին Սուրիայէն եկած է Ռօտօնօս Պիչ եւ անդամակցած Ս. Յակոբ եկեղեցւոյ:

1984-1989 Ս. Յակոբ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանի ուսումնական խորհուրդի լիազօր ներկայացուցիչ եղած է: 1989էն ի վեր Քրիստի Հայրենակցական միութեան հիմնադիր անդամ է: Բազմաթիւ անգամներ եղած է Ս. Յակոբ եկեղեցւոյ անգամական ժողովի ատենապետ, երկու անգամ Պարգեւներ ստացած է Հ.Բ.Ը.Մ.ի վեթեւաններու եւ Ս. Յակոբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին կողմէ:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 7-էն

եւ թեմի Միջ-Եկեղեցական յարաբերութիւններու վարիչ Տնօրէն՝ Տիար Հայկ Մատոյեանի կողմէ:

Վերջապէս նոյն օրը երեկոյեան ժամը 7:00ին Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ կազմակերպուած 7րդ Տարեկան Միջ-Եկեղեցական աղօթքի երեկոն, որու ընթացքին աւանդաբար պատուի կ'արժանանան Լոս Անճելըսի Միջ-Եկեղեցական անդամատանէն ներս մեծ վաստակ ունեցող անհատներ եւ կամ կազմակերպութիւններ: Երեկոյի գլխաւոր պատգամաբերն էր Մէրի Էն Եպիսկոպոս Սուէնսըն՝ Միացեալ Մեթոտիստ Եկեղեցիէն: Այս տարի պատուի արժանացողը Հոռոմի Կաթոլիկ Եկեղեցւոյ Միջ-Եկեղեցական եւ Միջ-Կրօնական Յարաբերութիւններու վարիչ Տնօրէն Հայր Ալէքսէյ Սմիթն էր, որ տասնեակ տարիներ շարունակ իր անխոնջ ծառայութիւնը բերած է Լոս Անճելըսի մէջ գործող տարաբնոյթ յարանուանութիւնները իրար աւելի մօտեցնելու եւ փոխադարձ հասկացողութիւն ձեռք բերելու գործին մէջ: Երեկոյի ընթացքին Հոգեհանգստեան Մասնաւոր Պաշտօն

կատարուեցաւ Մայր Տաճարի Գլխաւոր Բարերար՝ Տիար Լեւոն Պարոնեանի, ինչպէս նաեւ վերջերս Գոլոմպիայի մէջ տեղի ունեցած օղանաւային արկածի եւ Օգլընտ Քաղաքի մէջ հրդեհի հետեւանքով զոհուածներու, 1988 թուի Դեկտեմբեր 7ին Հայաստանի երկրաշարժի եւ Միջին Արեւելքի պատերազմներուն զոհ զացած բազմաթիւ անձերու հոգիներու խաղաղութեան եւ հանգստութեան համար: Առաջնորդ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ, Միջ-Եկեղեցական արարողութեան մասնակցեցան Լոս Անճելըսի շրջանին մէջ ծառայող թեմիս հետեւեալ հոգեւորականները՝ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեան, Հոգ. Տ. Երեմիա Աբեղայ Աբգարեան, Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեան, Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեան, Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան, Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեան, Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան, Արժ. Տ. Սերովբէ Քհնյ. Էլլէնճեան, Արժ. Տ. Խաթակ Քհնյ. Շահպաղեան Արժ. Տ. Եղիա Քհնյ. Իսայեան եւ Սարկաւագներ:

Միջ-Եկեղեցական աղօթքի արարողապետն էր Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեան:

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com



ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կէրի ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տիտղոս առթիւ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Նայիրի Գոգեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ Սիւզանին եւ եղբոր Մանուկին եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Առ այդ \$50 կը նուիրեն «Մասիս»ին:

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՈՒԼԵՐ

Շարունակուած էջ 15-էն

քաղաքական տարբեր հոսանքներ ներկայացնող աշակերտներու տեսակ մը աշխատանոց եւ գործատեղի, հայ թէ ոչ-հայ, շարունակ իրարու հետ լեզու գտնելով եւ գոյակցելով, գոյէճի լայնախոհ ու համապարփակ շունչին տակ:

5.- Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան (Armenian Missionary Association of America, որ կը ծանցուի AMAA սկզբնատառերով) գործադիր տնօրէնը՝ Միհրան Ճանապետանը (1987-2000) եղած է շրջանաւարտ Հայկազեան Գոյէճէն: Անձնապէս լաւ ճանչցած ըլլալով զինք այդ Գոյէճին մէջ, կրնամ վկայել անոր հայաշունչ գործին եւ վաստակին անուամբ այդ ազգային կրթարանէն ներս:

Ունեցած եմ ընկերներ ու ճանչցած եմ անձեր, որոնք դարձած են նախկին ու ներկայ վկայեալ հայորդի «հայկազեանցիներ»: Բոլորն ալ

ունին ազգային առողջ ջիղ, պատրաստ՝ հայօրէն ապրելու եւ մտածելու, բան մը, որ վստահաբար կը ցանկային տեսնել իրենց մէջ աւետարանական գոյնով ու կերպարով ազգասէր եւ ուսումնասէր կոչուող Գոյէճի հիմնադիրները:

Այսօր, հեռուէն հետեւելով եւ կարդալով Հայկազեան Համալսարանի կատարած առաջատար գործունէութեան մասին Պէյրութի մէջ, անոր բարձրորակ դասախօսական շարքերով եւ ամէնուն հետ սիրալիր յարաբերութիւններ ունենալու իմաստուն քաղաքականութիւն վարող տնօրէնին՝ Տոքթ. Փօլ Հայտոսթեանի կարող գնացքով եւ աշխատանքով, ամէն հայ ակնածանքով կը խոնարհի յիշատակին եւ գործին առջեւ բոլոր անոնց, որոնք, անցեալին ու ներկայիս, սփռուքահայ մարմինն մէջ դրին ու տակաւին կը դնեն շունչը այս տեսակի առողջ կեանք շնորհող իրականութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆԵՂԱՅԻ ՅՈՒՆԱՐԵՆ

Շարունակուած էջ 14-էն

կազմակերպուած միջոցառումը, Համիդեան ջարդերի 120-ամյակի համար նախատեսուած եօթը միջոցառումներից՝ երկրորդն է:

Ծրագիրը վարում էր ՀԳՄ գործադիր խորհրդի անդամ Ավգերիտոս Անդրեոն, ով ներկայացրեց զրոյ Յովսէփ Քասեանի կողմից պատրաստած երեկոյի հայկական պոեզիայի յունարէն թարգմանութեան հակիրճ պատմութիւնը, իսկ դերասան Հայկ Գասարճեանին ուղեկցող հանրայն

Յոյն դերասաններ՝ Ֆրոստ Զազարեոնը եւ Դինոս Պոնտիկոպուլոսը ընթերցեցին հատուածներ Նաբանդեանի, Պատկանեանի, Սիամանթոյի, Վարուժանի, Իսահակեանի, Պարոյր Սեւակի, Էմինի, Շիրազի եւ այլ պոետների բանաստեղծութիւնների յունարէն թարգմանութիւններից:

Միջոցառումը տեղի ունեցաւ 1934թ. հիմնադրուած ՀԳՄ կենտրոնական դահլիճում: Յիշեցնենք, որ ՀԳՄ-ն Յունաստանի գրողների ամենահեղինակաւոր եւ հին միութիւնն է:

«Հայաստան» լրատու ցանց

ՀԱՄԵՐԳ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

որ անցնող 25 տարիների ընթացքին մենք ստեղծեցինք 2 հայկական պետութիւն. ազատ եւ անկախ Հայաստանի հանրապետութիւնը եւ մեր սիրելի Արցախը» եւ

եզրափակելով իր խօսքը նոր տարուան սեմին մաղթեց բոլորին երազներու եւ ցանկութիւններու իրականացում, նաեւ մաղթեց, որ Ս. Ծնունդը նշուի հայավայել եւ քրիստոնէսավայել կերպով՝ համախմբուած եկեղեցւոյ շուրջ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ-ԹԱԹԻԿԵԱՆ

Շարունակուած էջ 16-էն

րուն՝ ո՞րանցեց վարժարանիս դիմագրաւած դժուարութիւններն ու արձանագրած յաջողութիւնները, դարձեալ հաւաստացնելով ներկաները, որ մեր օժանդակութեան իւրաքանչիւր լուծման հրաշքներ կրնայ գործել տնտեսապէս տկարացած լիբանանահայ գաղութի մեր քոյր-եղբայներուն համար:

Խօսք առաւ նաեւ Հայ Աւետարանական Միութեան նախկին նախագահ վերապատուելի Յովսէ՛ Մաթոսեանը եւ շեշտեց հայ աւետարանական վարժարաններուն ջամբած որակաւոր եւ հոգեմտաւոր դաստիարակութեան եւ առաքելութեան կարեւորութիւնը:

Մեր նախկին շրջանաւարտներէն իրաւաբան Կարօ Ղազարեան՝ շրջանաւարտ 1978ին եւ Տօքթ. Աբրահամ Փանոսեան՝ շրջանաւարտ 1988ին, պատուեցան սոյն ձեռնարկին: Անոնք իրենց իրազոր-ծումներով եւ յաջողութիւններով փառք ու պատիւ կը բերեն մեր ազգին ու ապա մեր վարժարանին, ուր թրծուած են իրենց հոգիներն ու պայծառացած են իրենց միտքերը:

Երկու մեծարուող շրջանաւարտները խօսք առնելով ներկա-

ներուն փոխանցեցին իրենց երախտագիտական խօսքերը եւ շեշտեցին հայ աւետարանական վարժարանի դաստիարակութեան կարեւորութիւնը: Իրաւաբան Կարօ Ղազարեան իր խօսքին մէջ նշեց, որ ինք պարտական է իր սիրելի վարժարանին, որուն յարկէն ներս իր ստացած դաստիարակութեան եւ կրթութեան կը պարտի իր յաջողութիւնները:

Տօքթ. Աբրահամ Փանոսեանն ալ դրուատեց վարժարանէն ներս իր ստացած բարձրորակ կրթութիւնը, որուն իբրեւ արդիւնք կրցած է դիմագրաւել Միացեալ Նահանգներէն ներս ուսումնական բոլոր մարտահրաւէրները:

Ձեռնարկին իրենց գեղարուեստական մասնակցութիւնը բերին Տիկին Նեքթարին Չիլեանը եւ Ալպարեան քոյրերը: Առաջինը իր գեղեցիկ ձայնով դիւթեց ներկաները եւ իր նուագած քանոնի լարերուն մեղեդիներով տրամադրեց հաճելի պահեր, իսկ փաթիլ եւ Սինթիա Ալպարեաններն ալ իրենց հեզաճկուն եւ մեղմիկ հայկական զուգարարներով ճոխացուցին մթնոլորտը:

Շրջանաւարտից Միութիւնն կը յայտնէ իր երախտագրութեան կրթութիւնը բոլոր անոնց որոնք իրենց

ՍՈՒԵԳՆԱԾ ԱԶԱՈՐ

Շարունակուած էջ 15-էն

կերտուած ազատութիւնը քաղցր է եւ դրուատանքի արժանի: Արեւաշող երկնի տակ աշառը յաղթական ու խրոխտ կանգնած էր ժողովուրդով շրջապատուած, որոնցից ոչ մէկը քաջութիւն չունեցաւ նրան մօտենալու, միայն շտապ օգնութիւնից պատասխանատուներ եկան, այն էլ հեռուից թմրեցուցիչ փամփուշտներով նրան տապալեցին: Խղճահարութեան լուծիւն տիրեց, որոշնե-

րի աչքերից արցունքներ գլզլացին հերոս աշառի համար...

Մատաղացուն մորթուեց: Ինչ լաւ կը լինէր նրան ազատութիւն տրուէր, ինչպէս կախաղանից ազատուած է դատապարտեալը անմեղութեան համար: Աշառը պայքարել էր մահուան դէմ, այդ մարդիկ ճակատագրական պարագան ըմբռնելով նրան պիտի ազատութիւն տային, արդեօք նրանք գիտակցում էին Աստուարարածի հոգեվիճակը...:

ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ

Շարունակուած էջ 16-էն

մնալ լոկ այս պահի համար: Ես ինչ որ չափով կատարուած համարեցի իմ՝ «փոքրիկ դեսպանի» առաքելութիւնը, իսկ հայրենիք վերադարձայ ամբողջովին փոխուած՝ աւելի ուժեղ եւ հասուն: Պապի՛կ, իսկ դու հպարտ ե՞ս ինձանով: Երանի՛ հիմա ողջ լինելիք ու տեսնելիք, որ քո խրատները զուր չեն անցել:

Հինգ տարի անց կրկին Ամերիկայում եմ, այս երկրորդ անգամ էլ լի էր հրաշքներով եւ փոփոխութիւններով, որոնք մեծ ազդեցութիւն թողեցին ինձ վրայ: Ես հնարաւորութիւն ունեցայ աւելի շատ ժամանակ անցկացնելու իմ հարազատների հետ, որոնց երկար տարիներ է, ինչ չէի տեսել: Տատիկիս շնորհիւ այս անգամ եղայ Սան Ֆրանցիսկոյում, քայլեցի յայտնի կամրջի վրայով, որի մասին չէի էլ կարող երազել: Ծանօթացայ շատ բանիմաց եւ հայրենասէր մարդկանց հետ, որոնցից շատ բան

սովորեցի (եթէ Սան Ֆրանսիսքօ չգնայի, այս յօդուածը գրելու հնարաւորութիւն էլ չէի ունենայ):

Անասելի ոգեւորութեամբ պէտք է նշեմ, որ հնարաւորութիւն ընձեռնուեց պրակտիկ անցնելու նաեւ ՀՀ Գլխաւոր հիւպատոսութիւնում, որը ոչ միայն նպաստեց իմ մասնագիտական կարողութիւնների հարստացմանը, այլ նաեւ իմ հոգեկան իմ քնակատարելագործմանը: Ինձ մեծ յուզումներ եւ ուրախութեան արցունքներ էր պարզուում իմ հայրենակիցների անասման հայրենասիրութիւնը տեսնելը: Մարդիկ ապրելով օտարութեան մէջ չեն մոռացել իրենց արմատները, չեն մոռացել իրենց ծագումը եւ լեզուն: Այս ամէնից յետոյ էլ ինչպէ՞ս չհաւատալ հրաշքներին:

Յ. Գ. Չգիտեմ պատահականութիւն էր, թէ հրաշք, բայց առաջին այցելութեանս ընթացքում ինձ բախտ վիճակուեց լինել նաեւ Նիւ Եորքում՝ աշնանը...:

նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը բերին սոյն ձեռնարկին յաջողութեան սատարելով:

Մեր սիրելի տնօրէնուհին Օրդ. Վարդուհի Պալքեանին խօսքերը մէջբերելով. «Դարձեալ հրաշքի մը ակնատես եղանք այս օր», հազարաւոր մղոններ հեռու եղող հայագրի գաւակները իրենց սրտերն ու

քակաները բացած օժանդակութեան կը փութան մէկ շատ կարեւոր կրթական հաստատութեան մը՝ Հայ Աւետարանական Շամլեան Թաթիլեան Երկրորդական Վարժարանին՝ անոր գոյատեւման սատարելով:

Վարձքը կատար բոլորին: Թղթակցութիւնը Շրջանաւարտից Միութեանէն

St. Gregory Armenian Apostolic Church Pasadena
Christmas Eve Candlelight Service and Dinner

You and your Family are invited to our traditional December 24 Christmas Eve Candlelight service in the Sanctuary, on Saturday, Dec. 24/16 at 6:30 pm, followed by a Christmas Dinner in the GERAGOS hall. Admission is Free. For more information please call the church office 626-449-1523.

✳

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի/Փասատիմա **Christmas-ի Մոմավառութիւն/Արարողութիւն և Ընթրիք**

Դուք հրաւիրուած էք ներկայ գտնուելու Christmas-ի յատուկ Մոմավառութիւն/Արարողութեան Դեկտեմբեր 24-ին, երեկոյեան ժամը 6:30-7:15 եկեղեցւոյս մէջ, ապա ընթրիքի ԿԻՐԱԿՈՍ սրահէն ներս: Մուտքը ազատ: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը՝ 626-449-1523:

ՄԱԴՐԻԴԻ «ՌԵԱԼՆ»՝ ԱՇԽԱՐՀԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆ



Մադրիդի «Ռեալը» նուաճեց աշխարհի ակումբային ախոյեանի տիտղոսը՝ միայն լրացուցիչ ժամանակում կարողանալով առաւելութեան հասնել ճապոնական «Կաշիմա Անտլերսի» նկատմամբ՝ 4:2:

Երկուսուսույն «Նիսան» ստադիոնում 68 հազար ֆուտպոլասէրներին ներկայութեամբ տեղի ունեցած եզրափակիչում ֆրանսացի Ջինեդին Ջիդանի գլխավորած թիմը հաշիւը բացեց արդէն 9-րդ րոպէին: Աչքի ընկաւ ֆրանսացի յարձակուող Քրիմ Բենզեման: Դրանից չետոյ ճապոնական թիմը Գակու Շիբասակիի դուբլի շնորհիւ կարողացաւ հաւասարեցնել եւ առաջ անցնել: 60-րդ րոպէին պորտուգալացի Կրիշտիան Ռոնալդուն դիպուկ իրացրեց 11 մեթրանոցը: 2:2 հաշիւը պահպանուեց մինչեւ հիմնական ժամանակի աւարտը: Լրացուցիչ ժամանակում Արքայական թիմին յաղթանակ բերեց Ռոնալդուն, որը եւս երկու կոլ խփեց:

ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԻԲՐԱՅԻՍՈՎԻՉԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ 143 ՄԻԼԻՈՆ ԵՒՐՕ ՄԵԿ ՏԱՐՈՒՄՅ ՅԱՍԱՐ

Չինական Սուպերլիգան շարունակում է ջանք գործադրել անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» շուէտ յարձակուող Ջլատան Իբրահիմովիչին հրաւիրելու ուղղութեամբ: Չինաստանի կառավարութիւնը պատրաստ է ֆինանսապէս աջակցել Սուպերլիգայի ակումբներին մէկին եւ 35-ամեայ ֆուտպոլիստին մէկ մրցաշրջանի համար առաջարկել 143 միլիոն եւրո աշխատավարձ, հաղորդում է Daily Mail-ը:



Չինական կողմը «Մանչեսթեր Եունայթեդին» առաջարկ կ'անի արդէն այս ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ: Ամբողջ չինական թիմերից մէկը ազատ գործակալի կարգավիճած ունեցած Իբրահիմովիչին առաջարկում էր տարեկան 66 միլիոն եւրո աշխատավարձ, սակայն Իբրահիմովիչն ընդունեց պորտուգալացի ժողով Մոտրինյոյի հրաւերը եւ միացաւ անգլիական թիմին, որը մտադիր է մէկ տարով էլ երկարաձգել ֆուտպոլիստի պայմանագիրը:

ՍՈՒԱՐԵՍԻ ԴՈՒԲԸ «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ» ՕԳՆԵՑ ՅԱՂԹԵԼ «ԵՍՊԱՆՅՈՒՆ»

Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 16-րդ տուրում տեղի ունեցած կատալոնական դերբիում մրցեցին «Բարսելոնան» եւ «Էսպանյոլը»: Լուիս Էնրիկէի գլխավորած թիմը «Կամպ Նոու» ստադիոնում առաւելութեան հասաւ 4:1 հաշուով: Դաշտի տէրերի կազմում դուբլի հեղինակ դարձաւ ուրուգուացի յարձակուող Լուիս Սուարեսը: Մէկական անգամ էլ աչքի ընկան ժորդի Ալբան ու Լիոնել Մեսին:

«Բարսելոնան» 34 միլիոնով երկրորդ տեղում է եւ 3 միլիոն է հետ Մադրիդի «Ռեալից», որն անցկացրել է 15 հանդիպում:

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՄԵՍԻՆ Կ'ԱՌԱՋԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ 35 ՄԻԼԻՈՆ ԵՒՐՕ

«Բարսելոնայի» ղեկավարութիւնն աշխատում է արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսիի հետ գործող պայմանագիրը երկարաձգելու ուղղութեամբ:



AS-ի համաձայն՝ կատալոնական ակումբը Արժենթինայի հաւաքականի աւագին կ'առաջարկի տարեկան 35 միլիոն եւրո աշխատավարձ՝ առանց հարկերի (հարկերով 70 միլիոն): Այժմ Մեսին «Բարսելոնայում» ստանում է տարեկան 24 միլիոն եւրո, իսկ նրա գործող պայմանագրի ժամկէտը լրանում է 2018-ի ամառը:

«Բարսելոնայում» տարեկան 35 միլիոն եւրո ստանում է պրագլիացի յարձակուող Նեյմարը, որը վերջերս մինչեւ 2021 թուականը երկարաձգել էր պայմանագիրը:

LONDON CHESS CLASSIC. ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑ ՎԵՐՋԻՆ ՏՈՒՐՈՒՄ

Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում աւարտուեց London Chess Classic սուպերմրցաշարը: Հաջաստանի հաւաքականի առաջին համար Լեւոն Արոնեանը վերջին տուրում սպիտակներով մրցեց հետնապահ Վեսելին Տոպալովի հետ եւ պարտութիւն կրեց 53-րդ քայլում: Տուրի միւս պարտիաներում գրանցուեց ոչ ոքի:



Արոնեանը 4 միլիոնով բաժանեց 7-9-րդ տեղերը: Մրցաշարի յաղթողի կոչումը նուաճեց ամերիկացի Ուեսլի Սոն, որը վաստակեց 6 միլիոն: Նրանից կէս միլիոն հետ մնաց ամերիկացի Ֆաբիանո Կարուանան:

London Chess Classic-ը Grand Chess Tour-2016-ի վերջին փուլն էր: Ուեսլի Սոն նուաճեց նաեւ այս շարքի յաղթողի կոչումը: Լեւոն Արոնեանը գրաւեց չորրորդ տեղը:

ԵԱՆԱ ԵԳՈՐԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Ռիոյի Օլիմպիական խաղերի կրկնակի ախոյեան, ռուսաստանցի Եանա Եգորեանը նուաճել է համաշխարհային Մեծ մրցանակի հերթական փուլի յաղթողի կոչումը: Մեքսիկայի Կանկուն քաղաքում անցկացուած մրցաշարում Եանա Եգորեանը թրամարտի եզրափակիչում 15:11 հաշուով առաւելութեան է հասել հունգարացի Աննա Մարտոնի նկատմամբ:

Յիշեցնենք, որ Ռիոյի Օլիմպիական խաղերի թրամարտի անհատական եւ թիմային մրցումների ոսկէ մետալները նուաճած Եանա Եգորեանն այս շաբաթ արժանացել է Ռուսաստանի սպորտի նախարարութեան «Ռուսաստանի հպարտութիւն» մրցանակին, որը տրուում է տարուայ լաւագոյն մարզուհուն:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----